

ԴՐՈՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

1902

մանրամասնաբար հասարակական ունե գործի համար իր կողմէն է տալիս՝ անունը տասը տեղ փառաբանելու պայմանով — դա այնքան էլ զարմանալի չէ: Դրանք հասարակ «հողի մարդիկ են», «խեղճ քրիստոնեաներ»:

Բայց ի՞նչ ասել մեր «հասարակութեան» մասին, որը արտաքուստ ընդունելով կուլտուրական Եւրոպայի նիստ ու կացը, էպպէս շարունակում է մնալ նոյն, ընտանեկան օջախը միայն ճանաչող ուսմիկը, նոյն վաղեմի չարչին:

Հին սերունդը իր դատարկ քսակից, դառն քրտինքով աշխատած կողակներից «հոգու փրկութեան համար» էլի տալիս էր մի բան «ազգին»՝ աղքատին, եկեղեցուն, դպրոցին: Հիմիկէայ նորաբոյս քաղաքակրթւած «հասարակութիւնը», որ նիւթապէս անհամեմատ աւելի ապահով է, որ փոքր իշատէ հասկացողութիւն ունի գիտութիւնների մասին և շփուում է Եւրոպայի հետ, ազատել է «հոգու փրկութեան» պահանջից, բայց չի իւրացրել ոչ մի նոր աւելի բարձր սկզբունք, աւելի վե՛հ գաղափար: Փափուկ նիստ ու կաց և կողակնոց բարեգործութիւն — ահա նրա իդէալը — բնական հետեւանք այն փթած, կիսաստրկական ու նիւթապաշտ ուղղութեան, որ տիրում է հայերի ապրած վայրերում՝ Տաճկաստան, Ռուսաստան, Պարսկաստան: Այդ փթած պայմաններն են, որ արգելում են ժողովրդին զատել արտաքինը էականից, նիւթական կարիքների հետ միասին զգալ հակում դէպի մտաւորն ու հասարակականը:

Քիչ է տարբերում վերը յիշած «հասարակ մահկանացուներից» և մեր «ինտելիգենտ» անւանած տարրը: Դէն ձգենք նախ ուսանողութեան այն մասը, որ մոռացած ամէն ինչ զբաղւած է թղթախաղով, բուլւարներում թրև գալով դրանք բարոյական մեռելներ են և մեր և ուրիշների համար: Մի կողմը թողնենք նաև ուսանողութեան այն փոքրամասնութիւնը, որը ունի կենդանի իդէալներ և կազմում է ոյսօր մեր միութարուութիւնը:

Մեր ուսանողութեան և ինտելիգենցիայի մեծամասնութիւնը ներկայացնում է դեռ ևս մի անգոյն, թուլակամ մարմին — բնական հետեւանք անօրմալ կրթութեան: Դեռ մանուկ հասակում, կարգին չիւրացրած մայրենի բառաբար, նա ստիպւած է հետամուտ լինել օտար լեզուներին: Դրանց վրայ գործ դնելով իր ուժերի մեծագոյն մասը, նա հարկադրւած՝ իւրացնում է գիտութիւնը թուրքիկ կերպով, նրա մէջ չի արծարծւում հարկաւոր չափով սէր դէպի մտաւորը, ճշմարտութիւնը:

Եւ այդպէս թերի պատրաստութեամբ ընկնելով օտար աշխարհ, նա աւելի ևս կտրւում է հայրենի հասարակութիւնից, նրա պահանջներից: Ազատ, լայն ընտրութիւն անելու այս կամ այն մասնագիտութեան մէջ, նա տարիների ընթացքում ջանք չի գործ դնում լրացնելու մանկութեան շրջանում ստացած անօրմալ կրթութեան պակասները, նա չի կարողանում օգուտել գիտութեան բարիքներից այնպէս, որ կարողանայ օտարի ստեղծածից հնարաւորը պատուաստել հայրենի հողի վրայ:

Զինւած հրապարակական ժողովների և թուրքիկ հրատարակութիւնների թեթև էրուդիցիայով ու աժանագին ազատամտութեամբ, մեր այդ կարգի ջահէները սիստէմ են դարձնում ճոռոմաբանելը կամ թէ ամէնաշատը մտածում են ապագայում՝ հայի արագաշարժ լուսնային ձիու վրայ յարմարեցնել հօլանդական բեռնաւորի լուծը: ՏՀաս մարդկանց յատուկ մեծամտութեամբ նրանք մրտակում են ուրիշներին և պահանջում առանձին ուշադրութիւն դէպի իրենց կարծիքը, առանց մտածելու, որ այդ ուրիշներն էլ ունին իրենցից ոչ պակաս արժանաւորութիւններ և իրաւունք փոխադարձ ուշադրութեան:

Այդ ուղղութեան կեղծիքը երևան է գալիս՝ հէնց որ ուսանողական, խօսելու շրջանից մեր «ազգասէրը», «գաղափարական գործիչը» մտնում է կեանքի, գործելու շրջանը: Հէնց որ նա աւնում է նիւթապէս ապահով վիճակի ճաշակը, կամ մի քիչ տրորւում է իր դասնած գաղափարների համար, իսկոյն առաջ են գալիս «ընտանիք», «հասակ», «հասարակական ծանր պայմաններ»...

Երէկայ առաջադէմը դառնում է «հասարակ մահկանացու», ձուլւում է անգոյն ամբոխի հետ: Նրա հասարակական ամենամեծ գործը «բարեգործական» ժողովներում մասնակցելն է, կամ թէ այս կամ այն ազգայնի մահան առթիւ հոգեհանգիստ կատարելը: Ահ՞ որ այդ միջոցով նա ամբողջ աշխարհին իմաց է տալիս իր գոյութեան և «գործունէութեան» մասին...

Ցուցամուլութիւնը մեր ամենամեծ ակտերից մէկն է: Խօսքը առանց կենդանի գործի այլասեռում է մեր հասարակութիւնը:

Միմիայն խօսքը, համոզմունքը, գաղափարը դեռ ևս գրաւական չեն մեր կեանքի առաջագիմութեան համար Համոզմունքի ու գործի մէջ կայ մի նեղ, բայց խորը անդունդ, որ պէտք է անցնել:

Ինչպէս որ կառքը փոխադրելու միջոցին ամենամեծ ջանքը գործ է դրւում նրան տեղից շարժելու վրայ, այնպէս էլ հասարակական կեանքում համոզմունքից դէպի գործ անցնելու համար անհրաժեշտ է առանձին նախաձեռնութիւն և վճռողականութիւն: Առանց այդ վճռողականութեան ոչ մի ընդհանրացած գաղափար կեանքի համար արժէք չ'ունի, ինչպէս արժէքից զուրկ է այն շոգենաւը, որի մէջ կայ տաքացած ջուր, բայց չկայ եռացած շոգի:

Ժամը չէ՞ հասել արդեօք, որ մեր վարքերի մաքրութեան փարաջաւոր ու անփարաջալ քարոզիչները մի քիչ էլ իրենց անձնական կեանքով տային պահանջած մաքրութեան կէս օրինակը և մեծ խօսքերի հետ միացնէին գէթ փոքրիկ գործեր:

Դա այն միտմունքն է, որ պահանջւում է իւրաքանչիւր մի պարտաճանաչ հայից...

Մեր ինտելիգենցիայի չնչին մասն է միայն, որ ըմբռնել է հայ կեանքի այդ հասունացած պահանջը, որ ունի համոզմունքի հետ միասին և կամք՝ խօսքը գործի վերա-

ծերու: Այսօր նա ապրում է ժողովրդի հետ և քիչ ճառերով քայքայի զհասարակութիւններով իրականացնում է կեանքի մէջ իր պաշտած սկզբունքները: Նրանցից լաւագոյնները դրել են արդէն Հայրենիքի Սեղանի վրայ իրենց մատաղ գլուխները...

Նրանք թող իննեն մեր ուսուցիչներն ու առաջնորդները:

Ն Ի Լ Ի Բ

Անուշաբոյր թարմ ծաղիկներ
 Հայ օրիորդն ինձ ընծայեց,
 Հեռու երկրից անկեղծ նւէր
 Իր քոյրերուն ուղարկեց:
 Ասաց՝ — «Տուր այդ փունջն և սաս,
 «Թէ չի անցնիլ էլ երկար
 «Կուի դաշտում հարս ու փեսա
 «Կը հանդիպինք մենք իրար»:
 Կուի կուտանք, կուի արդար
 Կուի վերջին, ճգնական.
 Գօտնայնդւած հերոսաբար
 Եւ կազատենք Հայաստան:
 Դուրս ցայտեցին արցունքներ տաք
 Իմ աչքերից այդ պահին.
 Լսում էի կարծես անյագ
 Ազատութեան պատգամին:
 Եւ երգեցի տանել փունջն այն
 Դէպի կարմիր Հայաստան,
 Ուր վիրաւոր հայերն համայն
 Սպասում են փրկութեան:

ՉԱՐԽԻ-ՖԱՆԱՔ

28 մարտ 1903

պանները գտնելու համար: Կարապետն ալ Ատանա կը փոխադրուի մահամբիւ վիճակի մը մէջ ուր կը մեռնի նոյն գիշերը:

Ս ի ս.—Տուրքերը սաստիկ խստութեամբ կը հաւաքէին, այնպէս որ հազար ղուրուշնոց ապրանք մը յիսուն ղուրուշի կը ծախուի տուրքերը գանձելու համար: Իզմիրի օղլու անուն հայու մը 300 ղոշ, պարտքին համար 5,000 ղուրուշ արժողութեամբ այգին կառավարութիւնը ծախել տւած է:

Հ ա ճ ը ն . — Գայմագամի լըբութիւնները ալ չափը անցած են: Այս լիտին փորձանք մըն է հաճընցիներուն համար, ամէն օր նոր չարութիւններ կը ստեղծէ: Հայ հարուստներու դէմ խիստ հալածանքներ սկսած է և խեղճերը շարած մնացեր են և ինչ ընեն ինչն չեն գիտեր: Միշտ նոր զոպարտութիւններ, միշտ նոր հալածումներ, մանաւանդ իր բոլոր թոյնը կը թափի Ռէճէպեան ընտանիքի վրայ: Ռէճէպեանը Հաճընի հարուստներէն մին է, ունի երեք զուակ, որոնք Մերսին կը բնակին այժմ, մին բժիշկ և միւսները գեղագործ: Տօթթօր Ռէճէպեան Փարիզ ցուցահանդէս գնաց և անկէ ալ Ամերիկա, վերադարձին իր եղբայրներն ալ մէկտեղ բերած էր, որոնք Ամերիկայի մէջ գեղագործութիւն կուսանէին: Մերսին հասնելուն Հաճընի այս անպիտան գայմագամին տեղեկագրի մը վրայ, կառավարութիւնը բանտարկեց Ռէճէպեան եղբայրները. 2-3 ամիս բանտարկութենէ վերջ արձակուեցան. այն պայմանաւ որ Մերսինէն պիտի հեռանան: Բայց Հաճընի գայմագամը դարձեալ հանդարտ չկեցաւ և շարունակեց միշտ նոր զոպարտութիւններ տեղացնել Ռէճէպեան ընտանիքին վրայ, անանկ որ կառավարութիւնը այս օրերս Հաճընէն բերել տւաւ Ռէճէպեան հայրը և ատոր ազգարարերէ որ Ատանա պիտի մնայ և առանց կառավարութեան հրամանին ուրիշ տեղ չպիտի երթայ: Գալով Ռէճէպեան եղբայրներուն կառավարութիւնը տօթթօրին կրկին հրամայած է որ Մերսինէն դուրս բնաւ չելայ: (Որովհետեւ տօթթօրին երբեմն կը թողատուէր շրջակաները երթալ բժշկելու համար): Գեղագործներուն ալ ազգարարած է որ Ամերիկա վերադառնան Թիւրքիա չմնան:

Մարդկային խիղճը մանաւանդ կ'ապստամբեցնեն այս գայմագամ ըսւած հրէշին իգործ դժբաժն շատ մը կուսապլըծումները, առեւանգումները: Չենք գիտեր թէ հաճընցիները ինչպէս կը հանդուրժեն այսպիսի գաղափարներուն:

Գայմագամը ամէն օր զօրով նոր հարսեր և կոյս աղջիկներ բերել կուտայ եղեր և անոնց վրայ իր գազանային կիրքերը կը յագեցնէ եղեր: Հետեւեալ իրողութիւնը շատ խօսուն է ըստ ինքեան:

Գայմագամը ծառայ մ'ունի եղեր իր քովը: Այս ծառան (հայ) կ'ամուսնանայ, ամուսնութեան առաջին գիշերը գայմագամն է որ փեսի պաշտօնը կը կատարէ:

Գայմագամը իր կեղեքումներով կը գերազանցէ իր միւս պաշտօնակիցները: Տուրքերը այն սաստիկ խստութեամբ հաւաքել կուտայ որ երկու հազարի չափ կալւած ծախել տւած է իր պաշտօնավարութեան շրջանին մէջ:

Հարիւր ղուրուշնոց ապրանք 10 ղուրուշի ծախւած է: Մտածեցէք որքան թշուառութեան մէջ պիտի ըլլայ Հաճընի խեղճ ժողովուրդը:

Կառավարութիւնը խարբերոյցի, տիգրանակիրտցի հայերը չձգեր որ իրենց տեղէն ուրիշ տեղեր երթան:

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Մ Է Ր Ս Ի Ն Է Ն

28 մայիս 1902

Գարնան հետ տաճկական վայրագութիւններն աւելի կը սաստկանան կարծես: Տխուր լուրերու շարքերը կը հասնին ամէն կողմէ:

Ատանայէն սկսենք: Ասկէ ամիս մը առաջ Կարապետ ճէրէճեանը, բնիկ ատանացի, Միսիս կերթայ առեւտրական գործերի համար (ինք շրջուն փերեզակ մըն էր): Չին արձեւու համար Միսիսէն քառօրդ ժամ հեռու դաշտ մը կերթայ, հոգ ձին կը ձգէ և ինքն ալ անպին քիչ մը հեռու կը նստի: Անդիէն երկու ձիաւոր կուգան և ձին կը բաշեն կը տանին՝ իբր թէ իրենց սեփականութիւնը եղած ըլլար: Կարապետը կը պոռայ, «ո՞ր կը տանիք իմ ձիս», և կը վազէ դէպի այս կատարած գաղանները: «Խնդրը կեանքուր, շունս պագ, նասըյ պաղըրըյօր» (խոզ կեանքուրին նայէ, ինչպէս կը պոռայ) կըսեն և ուզելով վերով ծանրապէս կը վերաւորեն խեղճը, և ձին առնելով կը տանին, ձգելով Կարապետը արիւնաթաթախ վիճակի մը մէջ: Քանի մը ճամբորդներ զինքը այս վիճակի մէջ տեսնելով Միսիս կերթան և կառավարութեան լուր կուտան: Կառավարութիւնը տեղէն չի շարժիր մարդաս-

աշխատելու համար: Խարբերողները ամէն տարի Ատանա կուգային աշխատելու, բայց այս տարի բնաւ չեկան. քանի մը հատ միայն եկած են քիւրդերու հետ: Վառավարութիւնը կուգեր նաև գէթունցիները, Փոնուզցիները և կապանցիներն ալ իրենց տեղը պահելու բայց չյաջողեցաւ: Զէյթունցիները բաւական թւով Ատանա եկած են աշխատելու համար:

Ահա մեր շրջականերուն վիճակը. երկրի ներսերէն հասնող լուրերն նոյնքան և աւելի վրդովեցուցիչ են: Տիգրանակերտէն առնւած ստոյգ տեղեկութիւններուն նայելով այն տեղին վիճակն ալ շատ ողբալի է: Աերջերս 2 հայ սպաննւած են, որոնցմէ մին 2 էքերիկէ Օհանէս անուն միջնորդ (սիսար) մը՝ սպաննւած գտնուած է քաղաքին պարիսպի փլատակներուն մէջտեղ: Միւսը որբևայրի կնկան մը մէկ հատիկ զաւակ 24 տարեկան Միկտիչ Տէրունեան անունով երիտասարդ մըն է, որու սպանութիւնը հետեւեալ ցաւալի պարագաներու մէջ տեղի ունեցեր է:

Յիշեալ դժբախտ երիտասարդը իրեն հետ տարեկից երկու ընկերներով քաղաքին հիւսիսային կողմը մէկ ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Հայեղիկ գիւղը երթալու ատեն ճամբու վրայ գտնուող թիւրք գիւղի մը առջև, ուրիկ անհրաժեշտաբար պետք էր անցնել, յարձակում կը կրեն հինգ զինեալ թիւրքերէ: Տղաքները սարսափած փախուստ տալ կուզեն: Անոնցմէ մին թիւրք մուլային տունը կը նետէ ինքզինք ու կազատի. միւսը պարտէզներու խիտ ծառերու տակ ինքզինքը անյայտ կ'ընէ, իսկ երրորդը խեղճ Տէրունեան, որ բաւականաչափ քաջասիրտ երիտասարդ մըն է եղեր, դիմադրել կուզէ: Զգիտցւիր որ մէջերնին պայքարը որչափ կը տևէ, հինգ թիւրքերը մէկտեղ շատ մը դաշոյնի հարւածներով կը սպաննեն զայն և դիակը կը նետեն գիւղի արևելակողմէն վազող Տիգրիս գետը: Հետեւեալ օրը ընկերները քաղաք վերադառնալով եղելութիւնը կ'իմացնեն անբախտ Տէրունեանի մօրը, որը իր կարգին դիմում կ'ընէ կուսակալին: Վուսակալը 30 հեծելազօրք կը ղրկէ դէպքին վայրը. 18 քիւրդեր կը ձերբակալուին, բայց սպաննուողն դիակը մէջտեղ չ'եկեր: Կրկին դիմումներ կ'ըլլան կուսակալին, որը խիստ հրամաններ կուտայ Ալայ պէկին որ անպատճառ տղուն դիակը պիտի գտնէ: Երկրորդ անգամին դէպքին վայրը եղած այցելութեան մէջ մեռնողն գուլպաները, գօտին և կօշիկները կը գտնեն, ատկէ կ'եզտակացի թէ դիակը գետը նետուած է վալին հրամանով գետին գնացքի վար մարդիկներ կ'ուղարկուին, որոնք վեց ժամ հեռաւորութեամբ Պիսմիլ անուն թիւրքմէն գիւղացիներու գիւղին առջև կը յաջողին բռնել դիակը, ոտքերը, ձեռքերը ետևը կապուած և վրան շատ մը դաշոյնի հարւածներ ստացած:

Աւելի խուլ անկիւններէն Ուրֆայէն հասնող նուազոտ ձայները շատ սրտաձմրկի են: «Անդանի էակներու գերեզմանատուն» յորջորջելու արժանի տառապանքի այս քաղաքին մէջ հայերու վիճակը սրտակեղիք և աղետարար է: Ամէն ժամ մի տեսակ ցաւ. ամէն վայրկեան կոտորածի, սպանութեան վախ ու սարսափ: Թիւրք մոլեռանդութիւնը այս դժբախտ քաղաքին մէջ այնքան կատաղութեան հասեր է որ եհնիչերիութեան օրերու կարելի է հազար անգամ անը քաշել այն օրերուն նախանձիր Ամենէն վայրագ, ամենէն կատաղի և միանգամայն ֆանատիք թիւրքերը կազմեր են հոն մի տեսակ

եհնիչերական—ըսենք—կազմակերպութիւն: Իրենց հրամանապետութեան, իրենց պաշտպանութեան տակ առած և իրենց ազդեցութեան շրջանին մէջ բաժնած են քաղաքին էն սրիկայ, էն բարբարոս խուժանը, որոնք իրենց քաջահոգիին համեմատ կը կեղեքեն, կը կողոպտեն և իհարկին կը սպաննեն արդէն արիւնաքամ ժողովուրդը: Վառավարութիւնը գաղտնապէս կը դրդէ և կը քաջալերէ զանոնք: Արտօնած է ընել ամէն ինչ մի պայմանով որ ճարպիկ գործեն և իհարկին եթէ մարդասպանութիւն ալ ընեն աշխատին որ մութին մէջ կատարեն, ականատես վիաներու բացակայութեանը: Նոր-եհնիչերիները յաճախ վրան-բաց վայրագութիւններու առջև ալ չեն ընկրկիր: Նախ որ իրենց կռակ ունին կառավարութիւնը, իրենց բարի-խրատունը, և երկրորդ գործուած ոճիրներու ականատեսները եթէ թիւրք են, անկարելի է որ թիւրքին իմաստ վկայութիւններ տան, իսկ եթէ գործադրած վայրագութիւնները տեսնողը հայու աչքեր են, իրեն ալ նոյն վիճակին սպասած ըլլալու սարսափէն շանթահարած ակամայ ստիպուած է իր կենդանի աչքերովը տեսածները ուրանալու:

Աերջնական բնաջնջումի վճիռը հագած այս կիսաւեր քաղաքէն պահ մը մեր աչքերը դարձնենք ուրիշ մի քաղաքի, Վեսարիոյ վրայ: Այս քաղաքը որ 95-96-ի Մեծ-Աղէտի ատեն նա ալ իր կարգին քամեր էր դառնութեան բաժակը, այն սև օրերէն իվեր գէթ համեմատաբար մի քիչ աւելի հանգստութիւն կը վայելելու եւ ահա այնտեղի մի քիչ պայծառ հորիզոնն ալ կը մթնի, մոնկոլութեան շրթայած վիշապը կամաց կամաց զլուխ կը վերցնէ և իր գրգռուած ճիւղային խորթակը յագեցնել կուզէ: Սարսափի այն սև օրերու վրայէն որչափ ալ վեց-եօթը տարիներ սահած ըլլան կեսարացիք երէք չեն կարող մոռանալ իրենց գազան Մէմէտներուն միջև, դէպքէն քեչ վերջը, դարձած սա հետեւեալ խօսակցութիւնը, որուն սարսուղազեցիկ նշանակութիւնը իրենք, կեսարացիք միայն կրնան ըմբռնել. — «Օլան Մէմէտ», պագլավանըն ղեբըճըղընը եհտիւք, օրթասը ղալար», այսինքն սո՛ Մէմէտ, կարկանդակին եղբրքները միայն կըցանք ուտել, մէջտեղը մնաց:

Այս խօսքերով Մէմէտները իրարու սիրտցաւ զղուճներ կը յայտնէին որ 7-800 կեսավուր միայն կըցեր էին սպաննել փոխանակ մի քանի հազարներ կոտորելու, կամ հայ արու սեռը բոլորովին բնաջնջ ընելով հայ կիներուն տիրանալու: Զղջացեր էին որ շուկաներու ապրանքները ամբողջութեամբ և տուններուն մի մասը միայն կըցան թալները մինչդեռ տուններու հարստութիւնը անձեռնմխելի մնացել էին: Զղջացեր էին նաև որ 50-60 անմեղ կոյս աղջիկներ միայն կըցան լեռները տանիլ, փոխանակ հայութեան ամբողջ կոյսերը և գեղեցիկ կիները իրենց հարէմներու մէջ վայելելու: Եւ վերջապէս զղջացեր էին որ իրենց գործադրած վայրագութիւնները իրենց գազանային ճաշակներուն յարմարելէ դեռ շատ հեռու էին: Եւ տարիներ տարիներու կը յաջորդէր սպասելով ակնկառոյց և անհամբեր այն ցանկալի օրւան, որ «Աստուծոյ շուքը» շուքին մէջ իրենց աչք-թարթիկ մըն էր, և իրենք ալ իրենց կարգին յանուն միւսիւր մաններու ալլահի և «վերջին օրերու մեծափառ մարգարէի» պէս մ էլ է մը քաշէին վայելելու կարկանդակի միջուկն ևս:

Վերևի թէ վերջերս այն տեղի Մէմէտներուն աչք-

խաղ մը եղած է, բայց չենք գիտեր որ ինչո՞ւ կարկանդակին եղերքները միայն կրցեր են արծել: Ահա մասնաւորներու եկած լուրերէն կը քաղեմ ճետեալ ստոյգ տեղեկութիւնները:

Ասկէ մի քանի շաբաթներ առաջ թիւրք սրիկաները իրենց գաղանային կիրքերը յագեցնելու համար բռնի կը վերցնեն 15-16 տարեկան հայ պատանի մը, որ բնութենէն ֆիզիքական գեղեցկութեամբ օժտուած ըլլալու յանցանքն ունի եղբոր: Տղուն ազգականներէն Գ. Գունդազեան անուն անձը, որ քաղքին հարուստներէն և երևելիներէն է եղբոր, դիմումներ կ'ընէ կառավարութեան մօտ՝ անբախտ տղան գազաններու ճիրանէն ազատելու համար: Կառավարութիւնը, հաւատարիմ իր Մէմէտներուն հանդէպ ուխտած բարեացակամութեան, կամ ո՞վ գիտէ իր գաղտնի տւած հրահանգներուն խոստմնապահ, այնքան ալ սիրտ չ'ընէր շուտով տեղէն շարժելու: Գիմումները գիմումներու վրայ կը տեղան կառավարութեան, և վերջապէս վեց օր վերջ տղան իր ծնողքներուն կը յանձնուի անկարագրելի վիճակի մը մէջ: Մէմէտները կը կատարեն Գունդազեանի դէմ, որ իրենց խաղաղ վայելուժը խանգարեց, կառավարութիւնն ալ իր կարգին, որ առանձնաշնորհեալ տարրին արարքներուն դէմ ստրուկ տարրը դեռ բողոքելու յանգանութիւնը կունենայ. և ահա գազանութեան նշքրակը կուղղեն ուղղակի խեղճ մարդուն սիրտը, որպէս զի ուրիշ այդպիսի պարագաներու մէջ սիրտը չկրնայ բաբախել և լեզուն քաշելու խոհեմութիւնը ունենայ: Նորա գեղեցիկ մէկ աղջիկը որ դեռ վեց ամիսներէ իվեր հարս է գնացեր Ա. Պարութեանին տունը, մի քանի ազգական կիներով բաղնիք գացած ատեն օր-ցերեկին կ'առուանգուի արիւնուռա գազաններուն կողմէ, իրենց տանը դռնէն մի քանի քայլ անդին: Սրիկայ թիւրքերը սուրբերը մերկացուցած կըսպանան անմիջապէս սպաննելու այն օր. կը յանդգնի իրենց վրայ դալ և խեղճ նոր հարսն իր և իրեն ընկերակից կիներուն աղաղակներուն մէջ բռնի կը տարւի թիւրքերէն: Անբախտ հայրը դարձեալ կը վազէ կառավարութեան դուռը, բայց աւանդական «էֆէնտիմ, կ է Լ տ ի հ ա ո վ կ է թ ա ի հ ա ո վ», չորս օր յետոյ միայն կարելի կ'ըլլայ հարսը գազաններուն ձեռքէն ազատել, մինչդեռ սրիկաներու ետէն գացող ժանդարմները քաղքին եղբրքէն անդին անցած չեն: Աւելին վրայ պէտք է լռել վասն զի կը վախնանք որ մեր հանգստութիւնը և ապահովութիւնը հանդիսաւորապէս ապահովող եւրօպական դիւանագիտութիւնը «ապահովութիւն» բառով այդ բաները հասկընալ ուզեր է:

Յ. Գ.—Վերջին պահուն ստոյգ աղբիւրէ մը կիմանանք թէ անցեալ շաբաթ Մարաշէն, Ջէյթունէն և Հաճընէն գաղանի կերպով զինուորներ զգուած է Պուրուք և Շիվիլճի գիւղերուն վրայ իբր թէ յեղափոխականներ փնտռելու: Շատ մը խուզարկութիւններ, բանտարկութիւններ և յափշտակութիւններ տեղի ունեցեր են: Կառավարութիւնը Ջէյթունի շուրջ գտնուող բոլոր թիւրք գիւղերու գէնք, փամփուռտ և վառօր բաշխեր է: Թիւրքերուն մէջ խորհրդաւոր փսփուկներ կը գառնան եղբոր, հետեանքը իհարկէ հայու համար լաւ նշաններ չեն:

Երբ կը գոցէի նամակս այս վայրկենիս աւանդ ստոյգ աղբիւրէ մը կիմանամ մի դէպք, որու վայրենիներու ալ վերագրելու անարգարութիւն պիտի ըլլար: Վերև պատած եմ Կեսարիայի մէջ հայ պատանիի մը թիւրք

սրիկաներէն յափշտակելը և ինչ: Թիւրք կառավարութիւնը անոնցմէ մէկ քանինքը կը բռնէ և կը բանտարկէ: Հարցաքննութեան պահուն թիւրքերը կուրանան տղուն վրայ իրենց կատարած գազանութիւնը, հետեաբար հարկ կը դատուի բժշկական քննութեան մը ենթարկել և հետեանքի մասին ուրաք մը տալ: Տեղոյն բժիշկները, որոնց մեծամասնութիւնը հայ են, իրենց վախէն չեն ուղեր տեղեկագիր մը տալ և խուսաբողական ընթացքներու կը դիմեն: Բայց կը գտնուի մէկը, ժողովուրդին ամենուն սիրելի, ազնիւ և պատուաւոր բժիշկ մը, նահապետ էֆէնտի Թապիպեան չկրնար այս բացարձակ և յայտնի ճշմարտութեան դէմ աչք գոցել և տղուն վայրագորէն բռնաբարւած ըլլալու մասին տեղեկագիր մը կուտայ: Գիտէք, կրնաք երեւակայել իսկ ո՞վ քաղաքակիրթ մարդկութիւն, թէ ի՞նչ կ'ըլլայ աչքերու ցատկող ճշմարտութեան մը հիմնած տեղեկագրի մը հետեանքը.— խեղճ սօքթօրը, 50-55 տարիներու հասակի մը մէջ, նա ալ իր կարգին թիւրք սրիկաներէն բռնի կը վերցուի և Ի՞նչ հարկ խօսելու թէ երբէք չպիտի գտնուի բժիշկ մը, որ սիրտ պիտի ունենայ ականատես ըլլալ իր ծեր պաշտօնակցին կրած սարսափելի անարգանքին, անոր ենթարկած քստմնելի ոճրի նկատմամբ տեղեկագիր մը պատրաստելու: Ահա թիւրք խուժանը. ահա թիւրք կառավարութիւնը: Ձեզի, ձեր խղճին, ձեր մարդկային զգացումներուն դիմում կ'ընենք ո՞վ քաղաքակիրթ աշխարհի բժիշկներ, պահ մը դարձուցէք ձեր աչքերը Թիւրքիա ըստած դժոխք աշխարհին վրայ և տեսէք թէ ի՞նչ գարշելի ոճրագործութեան զոհ կերթայ ձեր յարգելի մի ծեր պաշտօնակիցը: Ձեզ կը դիմենք, ով ազատ երկիրներու տիկիներ և օրիորդներ, խիղճ ունեցէք ձեր հայ քոյրերուն, հայ կոյսերուն բարբարոսներու միջոցաւ բռնաբարեալ պատիւներուն վրայ և ձեզ ձեզ կը դիմենք ով ամբողջ մարդկութիւն, ալ հերիք է որ քաղաքակրթութեան այս աղտը դեռ երկար աղտոտէ դարուս պատմութիւնը: Այլ ամօթ է, նախատի՛նք է:

Ն Ա Մ Ա Կ Տ Ր Ա Պ Ի Զ Օ Ն Է Ն

2 յունիս 1902

Մի քանի տարւայ ընթացքի մէջ դիզած և ահագին գումարներու հասած տուրքերը գանձելու համար, կառավարութիւնը ծախեց գիւղացոց կենդանիները՝ կով, եզ, ոչխար և ըն ու իրենց վերջին ապակէնը, հողը: Ով որ կը տրտնջայ, կամ իր չքաւորութիւնը կը մատնանշէ, անլուր տանջանքներու կ'ենթարկուի: Իբր օրինակ մէջ բերենք՝ նոխածանա, Իլէ, Վերանայ գիւղերը:

Վերանայ, որ քսան տուն ունի, աղքատ գիւղ մ'է, ունէ կարևոր բերք չունենալուն համար: Իր երկրաբործական արտադրութիւնները հազիւ վեց ամիս կը բաւէ: Վերջին օրերս հարկահաւաքները հոս ալ փառով՝ դէպքէն առաջ ու յետոյ մնացած տուրքերը պահանդէպքին, չտրուելու պարագային կըսպանան ծախել ուրիշ գիւղերու նման, անոնց ունեցած չունեցածը: Խեղճ գիւղացիք, ի՞նչ ընեն, սկսած են իրենք իրենց ձեռքով ծախել օրական աղքատիկ պարէնը հայթայթող իրերը: Եթէ չի ծախեն ու հարկահաւաքները չի գոհացնեն, կառավարութիւնը պիտի ծախէ:

Ինչ 15 տուն ունեցող գիւղ մ'է: Մէկ երկու ամիս առաջ այս գիւղի բնակիչք հարկահաւար պաշտօնեաներէ ու զինւորներէ անխնայ գանակոճեցան և քստմնելի տանջանքներու ենթարկեցան:

Կահոսեան Յովակիմ անուն մարդուն թեւերը բաւարով բրիչի կոթ մը կանցնեն անոր վերարկուին թեւերուն մէջէն ու կը ծեծեն զայն և այդ ձեռով ժամերով կը պահեն: Ուրիշ դէպք մը. Կահոսեան Յարութիւնին դարձեալ թեւերը բացած վերարկուէն կը գամեն տախտակի մը ու այդպէս կը պահեն ամբողջ հինգ ժամ: Ասոնց նման տանջանքներ կը կրեն շատ ուրիշներ ալ...

Ն Ա Մ Ա Կ Կ Ի Ր Ա Ս Օ Ն Է Ն

4 մայիս 1902

Թեւականէս 2-3 ամիս առաջ մեզի անյայտ պատճառներով (ոմանք կ'ըսեն թէ վնասակար գրութիւններ ձեռք անցած ըլլան) հոս գոմիսիօնճիւղութեամբ պարապող Գարեգին Հողանեան անւամբ Շապին-Գարահիսարցի երիտասարդ մը ձերբակալեցաւ, որուն յաջորդեց թէ հոս թէ Գարահիսարի և թէ ուրիշ վայրերու մէջ բազմաթիւ ձերբակալութիւններ, որոնց թիւը 26 ըլլալ կը կարծուի: Ձերբակալած հայերը բաւական տոնէն ի վեր Ամասիա ղրկած են, բացի Գ. Հողանեանէ. անոնց մէջ կը գտնուին եղբի Մարգարանի Անաթօլիա գօլէճին երեք բրօքէսօրները, բայց շուտով արձակուել են: Միւս բանտարկեալները կը մնան դեռ: Կը յուսացուի որ Զատիկի առթիւ ընդհ. ներում մը շնորհուի, բայց բան մը չեղաւ: Հողանեանը դեռ այստեղ կը սպասէ, իր վիճակի մասին բնաւ տեղեկութիւն մը չառնուիր:

Հայերը նոր ջարդի վախ մ'ունեցան ամիս մը առաջ: Կ'ըսուէր թէ թիւրք ժողովուրդը օրըստօրէ նոր առիթի մը կը սպասէր կոտորածի յարձակում մ'ընելու համար: Մի քանի թիւրքեր իրենց յոյն բարեկամներուն խոստովանել էին իրենց դիտաւորութիւնը՝ նոյնիսկ այս անգամ տղաքներու չննայելու վայրագ փափազին: Ըսեցաւ նաև, իբր թէ կառավարութիւն զայդ իմացած և մի քանի պարագլուխ թիւրքերը բանտարկելով անխուսափելի կոտորածի մը առջևը առած ըլլալ:

Այս լուրերը որքան ճշմարտութեան դրօշմը կը կրեն, չենք գիտեր: Սակայն չենք կարծեր, որ ժողովուրդին այնքան իրական վախ ազդող և համոզումով խօսող տարածայնութիւններ անհիմն եղած ըլլան:

Թիւրք գիւղացիներու մէջ կատարելագործեալ զէնքեր բաշխուել են, անշուշտ մաքսանենդութեամբ փախցած զէնքեր: Արդէն իբր ջարդի պարագլուխ բանտարկուողները զէնք փախցնողներն են, որոնք խոստովանել են թէ սուլթանին կամքին առաջ պատրաստ գտնուելու համար կը դործեն այդպէս: Այդ մասին կառավարութեան կողմէ տեղեկագրուել է կեդրոն և անկէ հրաման եկած է որ բոլոր զէնքերը ժողուն և անհասցանդները պատժին: Սակայն գիւրդին չէ գիւղացիին զէնքը գտնել մինչև ցարդ հաղիւ 10-15 զէնք գտնուել է:

Վերջերս հայերու և թիւրքերու, մանաւանդ հայերու համար օտար նաւու մէջ ճամբորդելը բոլորովին արգելուած է: Նոյնիսկ մերձակայ քաղաքներ Տրապիզոն, Օրդու չեն թողուր: Անցադիր հանելն ալ այնքան տաժանելի

և բազմածախս եղած է որ մարդ կը յուսահատի: Կեանքը օրըստօրէ անտանելի կը դառնայ:

Թիւրք պաշտօնարաններու ամենաստորին գրագիրը՝ իր քեֆին ժամերով սպասել կուտայ պզտիկ ստորագրութիւն մը գրելու, կամ կնիք մը զարնելու համար: Այսքան դժուարութիւններով և քմահաճոյքներով ձեռք առնուած անցադիրը ունենալով հանդերձ՝ թիւրք նաւահան գիսաներէն մէկէն միւսը հասնող մի հայ անվերջ ձեւակերպութիւններէ անցնելու համար օրերով կը տանջուի:

Տրապիզոնի առաջնորդական տեղապահ Պապանեան Եղնիկ վարդապետ ցածոգի և կառավարութեան անարգ գործիք մըն է. թաղականին, հոգաբարձուն, ուսուցչին և ուրիշներուն սպառնալիքներ կ'ընէ կառավարութեան ձեռքը յանձնելու:

Արտաքին թշնամիներէն զատ այսպիսի ներքին թշնամիներու պատճառած դժբախտութիւնները անհամար են:

Յ. Գ. — Երէկ ապրիլ 22-ին Հողանեան խեղճ երիտասարդը ուսուական նաւով ընդ հսկողութեամբ Տրապիզոն ղրկեցաւ, չենք գիտեր ինչ պիտի ըլլայ ասոր հետեանքը:

Ն Ա Մ Ա Կ Ս Ղ Ե Ր Դ Է Ն

12/25 ապրիլ 1902

Սիրելիս ***

Տեսնելով թէ կեանքիս սպառնացող վտանգները հետըրհետէ կը բազմանան, անխուսափելի մահէ մ'ազատելու համար 20 օր առաջ փախած Սղերդ եկած եմ: Ընտանիքս, գոյքերս չկրցայ հետս փոխադրել և թէ այս 20 օրան մէջ ամէն ջանք ու ճիգ և հնարք մտածելով ի գործ դրի ընտանիքս և ունեցածներս հոս Սղերդ փոխադրելու համար, բայց չյաջողեցայ: Այս առտու քեռիկս տղան պետօն Այնտուր գիւղէն հոս գալով ինձ գուժեց մեր տան կողոպուիլը: Ապրիլ 5-ին գիշերը Էօմէրէ-Իսքանի տղան Հասան և եղբայրը Տէրվիշ մի քանի չարագործներով մեր տունը կը կոխեն, կինս և Մահտեսի Պետրոսին կինը լաւ մը կը ծեծեն, այս առթիւ տղաս ամբողջ օր մը նուազեալ կը մնայ, Սարմէին գլուխը ջախջախած են և խօսեալներուն համեմատ ստացած վերքերէն պիտի մեռնի: Կիններուն օղակները, գլխու սև փուշները (ծածկոյթ) կը յափշտակեն, ինչպէս նաև մեր 18 ոչխարները և 8 էգ ձագերը: Վերջապէս մեզ անպատմելի չարիքներ և վնասներ հասուցել են:

Այսօր տեղուս առաջնորդ հօր գիտութեամբ բողոք պիտի տանք կառավարութեան, խնդրելով որ մեր ընտանիքը ընդ հսկողութեամբ ոստիկանաց Սղերդ փոխադրուին: Մեր հողակալածներն ալ գրաւելու սպառնալիք ըրած են յիշեալ Էօմէրէ-Իսքան և իր տղայքը:

Ահա այս է մեր վիճակը. մտահոգութիւններ և վշտեր զիս ընկճեցին, գլխիս մագերը այս տարիքիս մէջ ճեպ-ճերմակ եղած են: Շարքեր և յուսահատեր եմ: Չգիտեմ գլուխս ո՞ր քարին զարնեմ, ո՞ւր փախչիմ: Ի սէր Աստուծոյ ինձ խրատ մը...

Չերդ

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ր Ի Կ Ն Ե Ր

ՀԱՍՏԵՐՈՐԻ ՆԱՄՍԱԿ

Պետերբուրգ, 20 յունիս 1902

Երբեմն ապրում էր Թիֆլիսում ին տ էն դ ա ն տ-
ն եր ի վարչութեան մի պետ. իհարկէ նորին Գերազան-
ցութիւն, աստեղագարդ, ուժեղ, յարգաւած: Անունը չտանք,
մեռած է նա... Ռուս-թիւրքական պատերազմի ժամա-
նակ էր, այն ժամանակ, երբ օֆիցերական խնջոյքներում
շամպայնը հոսում էր նոյնքան առատ, որքան նա հատակ
ուռս զինւորների արիւնը Ղարսի ժայռերի վրայ, այն
երանելի ժամանակը, երբ դրամատէր, չինովելի, զինւոր-
ական լողում էին պետական գանձարանից հոսող
»թղթադրամի հեղեղի« մէջ, ինչպէս ձուկը ջրում: Կա-
պանների ոսկի դարն էր: Մեծ ինտէնդանտի առանձնա-
սենեակը ներս ու դուրս էին անում հարուստ կապա-
լառուները առաւօտից երեկոյ:

— Հարկը հազարով պակաս կը վերցնեմ Ձերդ
Գերազանցութիւն, ուրեմն մի խոշոր օգուտ գանձարանին
և յետոյ... իբրև արտայայտութիւն իմ յարգանքի դէպի
ձեզ, մի փոքրիկ նւէր...

— Գուր գիտէք, որ ես ձեզ երբէք չեմ մերժել,
կանեմ ինչ հնարաւոր է. ինչ վերաբերում է ձեր նւէրին,
ես այդ վերցնել չեմ կարող. դա դէմ է իմ սկզբունք-
ներին. երդում եմ, երբէք իմ այս ձեռքը—ցոյց տալով
իր փափիկ թաթը — կաշառք չի վերցրել...

Կապալառուն գիտէր, թէ ինչ է նշանակում «երբէք
իմ ձեռքը կաշառք չի վերցրել». հանեց ծոցից նախօրոք
պատրաստած 50 հազարը և դրեց սեղանի վրայ, նորին
Գերազանցութեան առաջ:

— Երբէք, երբէք իմ ձեռքը կաշառք չի վերցրել
ասաց գեներալը յետ ընկնելով բազկաթուփ մէջքի վրայ
և բանալով սեղանի արկղը: Եւ այն միջոցին, երբ նա
կրկնում էր անընդհատ «երբէք, երբէք», դրամատէրը,
վաղուց ծանօթ նորին Գերազանցութեան «սիստեմին»,
հրեց փոքր առ փոքր դրամի կապոցը, մինչև որ նա,
առանց դիպչելու գեներալական ձեռքին, ընկաւ արկղը...
Արկղը փակեց, երկուսն էլ ժպտախառն օտի կանգնեցին.
Կապալն գործը հարթաւած էր: Եւ յետոյ էլ ինչպէս և
առաջ, այդպէս էին հարթաւում և միւս կապալները, զուգ-
ընթաց ծանօթ երգման հետ, որ «երբէք ձեռքը կաշառ-
քին չի դիպչում»:

Ո՛վ չի ճանաչում Ռուսաստանում նորին Գերազանցու-
թեան այդ տ ի պ ը. նա նստած է մինիստրութիւնների
մէջ, նահանգապետի առանձնասենեակում, զինւորական
շտաբում, սահմանի վրայ և մայրաքաղաքում և կլանում
է ահագին գումարներ, առանց իր «ձեռքը կաշառքին
դիպչելու»:

Ամենահին գիմնազիայի դիրեկտորի գրասենեակն ենք.
նա էլ աստեղագարդ է, յարգաւած, ազգեցիկ, շատ լաւ
ծանօթ թիֆլիսեցիներին. վաղուց մտածում էր պաշտօնը
թողնել, հէնց որ լրանար ծառայութեան թողակաժամը:
Եւ ինչու չթողնել, ապահով կապիտալիստ է: Բայց գիտէք
ինչ ճանապարհով:

— Ասա հարկիկդ, որ վաղը ինձ մօտ անցնի, դիմեց
նա հարուստ աշակերտներից մէկին, նախասենեակով
անցնելիս: Հարկիկը եկաւ:

— Գիտէք, Գրիգորի Մինաիչ, փոքրիկի համար պէտք է

մէկ առանձին ուսուցիչ վերցնէք, ուսեբէնի և լատինեբէնի:
— Ուրախութեամբ, կը խնդրէի միայն մատնանիշ
անել մէկին, աւելացրեց «միամիտ ձեւացող» հարկիկը,
որ վաղուց գիտէր, թէ դասատուները, դիրեկտորի հո-
վանաւորածներից, արդէն պատրաստ են:

— Միամիտ եղէք վեց ամսում ձեր որդին քննութեան
համար բոլորովին պատրաստ կը լինի:

— Գժարանում եմ հաւատալ, շատ է ծոյր:

— Գժարանում էք, բացականչեց դիրեկտորը, գրա՞ղ
կարող եմ գալ:

— Մէկին երկու, միայն թէ կասկածում եմ:

... Գրազը վերջացաւ, մի նւէր հազար ըուբլիանոց և
մի խնջոյք արտաքին վայելչութեան համար:

Այդպէս էին փոխում աշակերտները իրենց դասա-
տուները, այդպէս էր հարստանում դիրեկտորը, միշտ եր-
դումը բերանին, որ «երբէք ձեռքը կաշառքին չի դիպչել»:

Գատարանի շքեղ շինութեան մէջ, հաստապատ
առանձնասենեակում բազմած է նախագահը: Մտախոհ
է նա. ինչ է նրան զբաղեցնում. դժբախտ բանտարկեալի
վիճակը, որին կէս ժամ առաջ նա արքայի դատապարտեց,
թէ մի այլ խնդիր, որ դուրս էր դատարանի պատերից...
Դուռը բաղնեցին, ներս մտնողը մի կին է: Ծառայող-
ները նրան լաւ են ճանաչում և կարող են չճանաչել
իրենց նախագահի կնոջը:

— Ի՞նչ կայ, կիսավախով հարցրեց ամուսինը:

— Եղբայրը եկաւ և 10 հազարը բերեց, շնչաց կինը,
դիւական ծիծաղը երեսին:

— Անհարին է, անկարելի է, մեղադրական փաստերը
սարսափելի են, պրօկուրօրը ոչինչ չի զիջում, մտածում
եմ, մտածում և ոչինչ չեմ կարող անել:

— Ինչ ուզում ես արա, ես արդէն խոստացել եմ
և փողը վերցրել...

... Եւ կինը շարունակում էր փողեր վերցնել, երբեմն
ուղղակի, երբեմն պարտավորահալի ձևով, յաճախ էլ իր
ջահէլ աղջկայ աջակցութեամբ, յօգուտ այն անսանձ
ծախսերի, որի մէջ խրաւծ էր այդ «բարձր» ընտանիքը:
Ամէնքը գիտէին այդ, սակայն յանցաւորը երկար ան-
պատիժ մնաց և իբրև դատաւոր շարունակում էր յանուն
օրէնքի բանտ ուղարկել կաշառակերութեան մէջ մեղա-
դրող խղճուկ գրագիրներին և ոստիկանական ծառայող-
ներին: Չարագործը դատում էր, բազմած նախագահական
աթոռին, ձեռքը յենած. օրինազրբի վրայ, միշտ երդուող,
որ «իր ձեռքը կաշառքին չի դիպչել»...

Իբրև լուսաբանող մի նոր պատկեր, ես անփոփոխ առաջ
եմ բերում մի ճշտապատում նամակ, ստացած Բագուից,
ներկայումս կարևոր կովկասեան կենտրոնից: Ահա.

«Բագուի գիմնազիայի վերատեսուչ Պ. յուլ շարունակ
հարբած, դիչերները թղթախաղի նւիրած, ցերեկները
հազիւ ժամանակ է ունենում քնելու եւ իր հրէշաւոր
ծախսերի համար աղբիւրներ դանելու մասին մտածելու:
Թէ որքան ճիշտ են այս խօսքերը — այդ կարելի է
եղբարկացնել նրանից, որ տարին մի քանի անգամ հազիւ
գնալով իրեն յանձնուած դասերին, նա այնքան քիչ է
ճանաչում աշակերտներին, որ եռամսեակի թւանշաններ
գնելիս, անկարող է լինում այդ անել ինքը եւ իր
առարկայից թւանշան գնելը յանձնում է միշտ դասա-
բանական վերակայուններին:

«Դժբախտ է այդ գիմնադիւան իր 1,000-ից աւել աշա-
կերտներով, դժբախտ ոչ միայն դրանով, որ պատանիները
չեն կարող այդտեղ սովորել մի բան, այլեւ մասնաւոր
նրանով, որ կարիք էլ չկայ սովորելու: Այլապէս կարելի

է դ ր ա մ ո վ վկայական ստանալ, այդտեղ դրամով են ընդունում նոր աշակերտներ, այդտեղ անբարոյականացած է ամբողջ ուսուցչական մարմինը:

«Բազուկեցի միլիտանտեր Բ. ի որդին ընտանիքի դուստրոյցի յետոյ միմիտարական վականախալով (այսինքն առանց քննութեան, միմիտարութիւնից նշանակելով) մտել էր Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը, բայց անկարող լինելով կուրսից կուրս անցնելու համար քննութիւն տալու, հեռացրել էր ինստիտուտից: Դրանից յետոյ նա մտածում էր համալսարան մտնել, ինկատի առնելով, որ գիմնազիայի վկայական Բազուկեցի կարող է ստանալ առանց քննութիւնների, իսկ համալսարանում է իւրաքանչիւր դասընթացում կարելի է նստել ոչ պակաս քան երկու տարի: Ետորհուրդ Պ. ցեպլի՝ այդ ծրագիրը այսօր աջողած է կատարելագոյն: Վերատեսուչը ստանալով տղայի հարուստ հօրից մի կլոր գումար, տալիս է նրան գիւմնազիայի ատտեսատ, ուր սակայն պահպանւած են բոլոր կարեւոր ձեւականութիւնները:

«Եթէ ուղում էք ձեր որդուն, աղականին կամ ծանօթին Բազուկեցի արական գիմնազիան մտցնել, մի մտածէք նրան լաւ պատրաստելու մասին: Գնացէք անձամբ վերատեսուչ Պ. ցեպլի մօտ եւ սովորական ինքիւր տալուց յետոյ՝ («Երեւեցէ») մի նկատելի դուժար յօգուտ («աշակերտական ամարային կօշտիայի»), որի ղեկավարը ինքը Պ. ցեպլն է: Լաւ կանէք, որ նւէրը նոյնիսկ նշանակէք կօշտիայի համար ժողովուրդ նւիրատուութիւնների մէջ: Կը նշանակէք թէ ոչ, յամենայն դէպս զլիւսաւորը նւէրն է եւ նւէրը տալով կարող էք համոզւած լինել, որ ձեր ինքիւրքի հետեւանքը կը լինի («չատ յաջող քննութիւն»):

«Տարւայ ընթացքում Պ. ցեպլն իր մուտքը աւելցնելու համար գործադրում է եւ հետեւեալ խորամանկ միջոցը: Նրա բազմամարդ գիմնազիայում շատ կան հարուստ ընտանիքի զաւակներ: Երբ իրեն փող է լինում հարկաւոր, նա գրում է մուրհակներ եւ ուղարկում է այս կամ այն աշակերտի մտովին ինքիւրով իրեն պարտք տալ մի որոշ գումար: Ետորհուրդ իմանալով, որ եթէ դրամ չտան, իրենց որդիքը պիտի մնան միեւնոյն դասարաններում, վճարում են մուրհակների զինը եւ պահում են այդ մուրհակները մինչեւ իրենց որդիք փոխում են դասարանները: Դրանից յետոյ շատերը ոչնչացնում են Պ. ցեպլի մուրհակները մինչեւ հետեւեալ տարին, մինչեւ նոր մուրհակներ:

«Ուսուցչական մարմնից մինչեւ այժմ չէ լուել բողոքի ձայն վերատեսուչ Պ. ի եւ իր անթիւ ղեկընդունների դէմ: Կարելի է ուրեմն երկուակայել, թէ ինչ արարածներ են դրանք եւ իրենք իրենց կողմից ինչեր են անում: Նրանք լուել եւ լուում են նոյնիսկ այն ժամանակ, երբ Պ. ցեպլ մի քանի ամիսներով իւրացնում է նրանց ոռծիկները: Ինչից են ստիպւած լուել... Մտածեցէք»:

Ահա և ցենզորի (գրաքննիչ) գրասենեակը: Ցենզոր, լրագրիւնների կտրանքները առաջը թափած, աչքերը յառած կարմիր թանաքին, նա խազում և կտրում է, յանուն երկրի շահերի, յանուն ընդհանուր ապահովութեան: Ումեից պիտի կաշառք վերցնի նա. նրա գործը գրամատերերի հետ չէ, այլ անապահով խմբագիրների և գրողների, անվարժ կաշառատուութեան: Սակայն գաղտնիքների, նենգամտութեան, ելեւջների վարժ ցենզորը դրա միջոցը գտել է: Եւ նախ քան լրագրի համարի հրատարակութեան թոյլտուութիւնը, մի փոքրիկ տոմսակ վճայ նա հետեւեալ բառերն է շարագրում. ուղղած հրատարակչին կամ խմբագրին.

Մեծայարգոյ ***

Ուղարկեցէք ինձ, ինչպէս եմ, փոխարինարար, 300 բուրլի, որը շնորհակալութեամբ կը վերադարձնեմ շատ շուտով:

Թերթը պատրաստ կը լինի մի ժամից, ձեր պրայմը կարող է վերցնել:

Միշտ պատրաստ ծառայելու

«Փոխարինարար և շատ շուտով» խօսքերը վաղուց լաւ ծանօթ են խմբագրին, որ տարիների փորձառութեամբ եկել է այն եզրակացութեան, որ «երկխալութիւն» է թշնամացնել գրաքննիչին և աւելի մեծ միամտութիւն է յոյս դնել բողոքի կամ բարձր ատեանի վճայ և նա ուղարկում է կաշառքը, թէև ուրիշ անւան տակ, և իբրև միթարանք կցում նրան մի քանի յօդւածներ, որոնք այլ դէպքում չէին թոյլատրւի... Եսկ պարտաճանչ ցենզորը շարունակում է ջնջել, տոմսեր գրել, շքանշաններ ստանալ և վայելել այս անարգ կառավարութեան մէջ բարեխիղճ, անհրաժեշտ պաշտօնիայի անունը, որի ձեռքը երբեք կաշառքի չի դիպում»:

Եթէ դեռ զըւանքը չէ պատել ձեզ, ընթերցող, անցնե՛ք ուրիշ «առանձնասենեակներ»:

Վովկասեան մարաքաղաքի որոշ շրջաններում ո՞վ չէ լսել այն բարձրագոյն տիկնոջ մասին, որը փոխառութիւններ էր անում, սալօնի կնոջ բոլոր վայելչականութեամբ, սակայն երբեք չվճարելու պայմանաւ, այլ միայն այն պայմանաւ, որ ինքրատուի գործին այս կամ այն ընթացքը տրւի. կամ կաշառքի այն փաստերի մասին, որոնք հարկերներով շրջապատում են գիւնուրագրական ատեանները, ուր նորակոչ գիւնուրի «կուրծքը նեղացնելու», «հեռատեսը կարճատես դարձնելու», կամ «առաջին կարգի արտօնութեան իրաւունքի» վարձատրութեան չափը սահմանւած է այնքան խիստ ճշտապահութեամբ և միաժամանակ ծածկւած այնքան ապահով ճարպկութեամբ: Վամ այն հրէշաւոր մեքենայութիւնների մասին, որոնք կուսմ-կոփում են դրամի ուժով, հոգեւորական կանխստորիական հիմնարկութիւններում, ուր ասուածուժ փողը դարձնում է չհասը հաս, բարոյականը անբարոյական, անժառանգը ժառանգաւոր: Եւ այդ բոլորը «անձանէր» գիւնուրականների և «ասուածընտիր» սրբազանների հովանու տակ, որոնց ձեռքը, իհարկէ, երբեք կաշառքի չի դիպում...:

Սակայն այս բոլորը դեռ կաշառակերութեան մի սիստէմն է, ընդունւած մեծամեծներին շրջաններում, վարագուրւած քաղաքավարութեան շղարշով: Բայց կայ և ուրիշ սիստէմ, տարածւած վարչական ստորին շրջաններում, անողոր և սուղալի:

Ահա գնում է գիւղացին դէպի քաղաք: Եաստուլի միջոցով հրաման է ստացել. դաշտ ու գործ թողած, դուն է դուռ ընկած, 50 տոկոսով հազիւ 25 մանէթ է գտել և այդ 25 մանէթով գնում է արգարանալու, «թէ ինչու է նա անտառից փայտ կտրել»: Դրկիցները եկան ձամբայ դնելու և մի հարց միայն տւին. «ինչքան են տանում»: Այդ «ինչքան»-ի մէջն է ամփոփւած օրէնքը, դատը, յոյսը... Հինգ օր է արդէն գիւղացին գաւառական ատեանի շեմքում ընկած սպասում է... Նրանից 50 մանէթ են պահանջում. «պակաս չի լինի» յայտարարեցին: Դիմում է գրագրին, գիււնապետին. «աղա-պրիստաւին» — գաւառապետի բարձրութեան երբեք չի հասնի — և ամէն տեղ նոյն պատասխանը. «պակաս չի լինի»: Եւ ի՞նչպէս պակաս լինի. 25 մանէթը միայն գաւառապետին պիտի հասնի, իսկ մնացածները:

Փաստերը անթիւ են: Ոստիկանական կաշառակերութեան նկարագիրը տալու համար գուցէ նոյնքան պէտք է գրել որքան ինքը ոստիկանութիւնն է դրում անմեղ «հպատակների» դէմ: Բաւականանա՛նք մի նամակով, որը ուղարկել է ինձ վստահելի մի անձնաւորութիւն Բագուրի

Նահանգից: Ահա թէ ինչ է առում ակնատես նամագրերը:

Նոր տարուն եւ Վատիկն իւրաքանչիւր զրասնեակ Բալխանում եւ Սև քաղաքում (Նալթաշորերի եւ գործարանների կենդանավայրերում) ուղարկում է ոստիկանապետին մի յայտնի զուլար (25-50-100 բուրբի) հետեւեալ կերպով շարադրեալ նամակի հետ (ռուսերէն).

« Ուղարկելով ընդ սմին («...») բուրբի խորհարար ինչպիսի կամ ձեզ բաժանել այդ փողը ձեր բարեմեծութեան ենթակայ ստորին պաշտօնեաների մէջ »:

(Ստորագրութիւն կառավարի)

Սա ընդունեալ ձեռն է, որով գրում են համարեա ընդ զրասնեակները, եւ այդ նամակների պատճենները պաւում են զրասնեակների պաշտօնական գրքերում. ուղարկող զրամը բացարձակ կաշառք է ոստիկանութեան եւ միանգամայն անհրաժեշտ է համարում թաղանթի սանիտարական, տեխնիկական եւ այլն պահանջների վերաբերմամբ ոստիկանական ունէ անակոթ միջամտութեան առաջն առնելու համար: Սակայն այդ կարգի առարկաներով չէ վերջանում գործարանների կամ նալթաշորերի վճարք: Թէեւ դրամը, ինչպէս աւուում է նամակներում, ուղարկում է ոստիկանապետին իր ստորադրուներին բաժանելու համար, բայց դա զբաւոյր դոկումենտներում անմեղութիւն պահանջելու մի ձեռն է: — ուրիշ ոչինչ. իրօք՝ դրամը ամբողջապէս իւրացում են ոստիկանապետը կամ պրիստաւը, իսկ իրենց ստորադրեալներին նրանք ուղարկում են գործարանները՝ անձամբ շտրհաւորութիւններ անելու եւ իրենց մասերը ստանալու համար: Եւ դիտեալ է, որ երբ ունէ զրասնեակ հրաժարում է այդ ապօրինի տուրքերը ճշդութեամբ վճարելուց, իսկոյն ոստիկանութեան այս կամ այն զործակալը զաւիս է գործարան մի անկարգութիւն նկատելու եւ պատշաճ արձանագրութիւն կազմելու համար: Մի երիտասարդ կառավարիչ Սև քաղաքում պատմում էր, որ նոր պաշտօնի մտած, իր ծառայութեան հէնց երկրորդ օրը նա արժանանում է մի թաղական վերահսկողի (օկուլոսոնի) նստադիրտեւ) այցելութեան: Երբ գործարանի փորձեալ ծառայողները հասկացում են անփոքր կառավարչին պարոնի այցելութեան նպատակը, նա մերժում է կողէկ անգամ վճարելու: Նոյնը կրկնում է նաև հետեւեալ օրը, մինչ շուտով երիտասարդ կառավարիչը տեսնում է մի օր գործարանի քակում միեւնոյն հսկողին արձանագրութիւն կազմելիս՝ թէ գործարանի բակը շատ կեղտոտ է եւ թէ ղրքի մի պատը քանդեալ է առանց քաղաքային վարչութեան թոյլտուութիւնը ունենալու: Կառավարիչը պիտի ամբողջ շարքներ եւ զուգէ ամբներ դէս ու դէն քարը գար այդ մեղադրանքները շնչելու համար եւ ով գիտէ որքան ծախսերի պիտի ենթարկէր: Նա ստիպւում է կոնարհել իր ստորադրեալ փորձեալ ծառայողների խնդրի առաջ, եւ ոստիկանութեան պաշտօնեային իր առանձնասնեակը հրաւիրելով վճարում է նրան 10 ռուբլի եւ արձանագրութիւնը ձեռքից առնում: — Շատ շտրհակալ եւ, ա. կառավարիչը, որ ինչորք վերջացից այսպէս, սովորական ձեռով... Դնչ անեցի, ոտքի քիչ ենք ստանում, իսկ ծախսներս շատ է: Կրկին շտրհակալութիւն: Հստակ եղէք ամէն կերպ ինձ վրայ՝ — աւում է թաղական վերահսկիչը նկատարով գործարանից:

Սյս ընդունեալ, ընդհանրացած, բոլորին յայտնի ձեւերից դուրս, իւրաքանչիւր պաշտօնի պատմութիւնից է կախեալ եւ անուրի շտրհաւոր աղբիւրներ զտելու իր համար: Բալխանի ոստիկանապետ Խ. Բեգի, օրինակ, որ եղել է կաթօւնի կաշնձ (Լեհացի քահանայ) եւ որը օրթօքօքութիւն ընդունելով ներքեւ է իրեն ոստիկանական կարգերի, իր մի որդուն, որ չէ ծառայում ոչ մի տեղ, գրել է տւել երկը նալթաշորերում, իրեն զրասնեակի ծառայող 50-ից մինչեւ 70 բուրբի ամսականով իւրաքանչիւր հանքում: Ամէն ամիս երիտասարդը զաւիս է այդ հանքերը, եւ ստորագրելով զրասնեակներում պատշաճ ստացազրք, ստանում իր համար նշանակեալ թոշակը: Պրիստաները մինչեւ անգամ՝ յատուկ ոճ են ստեղծել իրենց դժգոհութիւնը արտայայտելու համար, երբ կամ նրանց քիչ է կաշառք ուղարկում կամ ժամանակին չէ ուղարկում: Նրանք հետախօսով կանչում են կառավարիչներին եւ աւում: — Դուք, պա. ինձնեաները, շատ լաւ էք սովորել թւաբանական առաջին երեք գործողութիւնները, բայց բաժանման մէջ շատ թոյլ եք... հասկանում էք ինչ ինկատի ունիմ... Սակայն իր ընդհանուր նշանակութեամբ ամենավորովեցուցիչ ձեռն է ստանում ոստիկանական կաշառակերութիւնը, երբ դա արտայայտում է ամբողջապէս ղեւքերում այն համ-

րաշնութեան մէջ, որ վաղուց գոյութիւն ունի աւազակների եւ ոստիկանութեան մէջ: Օր չէ անցնում համարեա որ Բալխանում եւ Բագուում սպանութիւն չպատահի եւ երբեք չեն գտնում յանցաւորները: Բալխան է, որ աւազակը բաժին հանէ ոստիկանին եւ նա աներկիւղ կարող է իր տանը նստել, իսկ նրա տեղ կը ձեռքաւարկ սպանողի առաջին պատահած անմեղ հարեւանը: «Կասպեան ընկերութեան» զանձապետի սպանման գործում, օրինակ, ըտրը ձեռքաւարկածների մէջ Նոյնիսկ գինւորական ատեանը չկարողացաւ մեղադրել եւ ոչ մէկին: Բալխանում յայտնի էին իրենց ոճիւրներով երկու աւազակապետներ — Կամիա եւ Շիշի, որոնք երկար տարիներ ահ ու դողի մէջ էին պահում ըտրը հանքերը: Սրանցից Կամիան անձամբ պատմում է իր ծանօթներին, որ երբեք չէ ստեղծ ոստիկանութիւնից, երբ կատարում էր անվերջ սպանութիւններ եւ գոյութիւններ, բայց հէնց որ մի քանի տարի առաջ թողեց իր արհեստը, ոստիկանապետը նրան բռնել տւեց, իբր արդէն անօգուտ մարդու...»

Եւ այդպէս ամէն տեղ ու ամէն միջոցներով այս հարգելիեան բիւրօկրատիան ծծում, արհնաքամ է անում ժողովուրդը, ու նրա ձեռքում տանջում, կեղեքում է գիւրացին, ամբողջ գիւղը, ամբողջ գաւառը: Թոյլ՝ եասաուրի ձեռքով աւելի ուժեղը՝ պրիստաւի կամ գաւառապետի գիւհանում, մէկը՝ զինւորական ատեանում, միւսը մաքսային վարչութեան մէջ, իսկ աւելի զօրեղները՝ նահանգական քաղաքներում, և դրանից աւելի բարձր վարչութիւններում... Ընդհանուր համատարած կեղեքումն է սա, օրինակուրեալ աւազակութիւն, որ կատարում է չէ թէ հեռաւոր ճանապարհների վրայ մուծ գիշերներին, այլ հանրային դիւանատներում, զարդարեալ գեղեցիկ ցուցանակներով դէպ ուր քարչ է գալիս դժբախտ ժողովուրդը արդարութիւն գտնելու...»

Եւ շտրհիւ այդ ապականեալ դասակարգի, ստեղծեալ եւ զօրացած վարչական անպէտք սխալմաների ու սօցիալական անարդար կարբերի, Կովկասում օրաւոր նկատում է նոր երեւոյթ: Կովկասցին, որ սկզբում այնքան համակիր էր ռուսական տիրապետութեան տարածման — անշուշտ ներքին խռովութիւններին վերջ դնելու շտրհիւ — ներկայումս արտայայտում է խոր հիասթափութիւն և վտանգաւոր պտուղներ խոստացող հակակրանք: Ժողովուրդի մէջ չմնաց հաւատ դէպի պետական արդի կարգերը, դէպի այդ կարգերի ներկայացուցիչը: Միտեմի պակասութիւնները լրացաւ գործադրողների պակասութեամբ: Դա ռուսական տիրապետութեան կատարեալ անանկութիւնն է Կովկասում:

Այդ հիասթափման նպաստեց և այն հանգամանքը, որ անբարեխիղճ, անընդունակ, անբարոյական, կաշառքի համար ամէն բան ոտի տակ տուող չինովնիկութիւնը պատժելիս, ռուս կառավարութիւնը մտքեց դարձեալ ազգայնական տեսակէտը: Անբարոյական, կաշառակեր հայ չինովնիկին պատժողը ներում է անբարոյական, կաշառակեր ռուս չինովնիկին: Այն ինչ ներբարոյական, կաշառակեր ռուս չինովնիկին: վրացին կամ լեհացին կարող չէ անել այն, ինչ անում է իր ռուս պաշտօնակիցը: Սա իհարկէ անբացառիկ երեւոյթ չէ, բայց դարձել է մի տեսակէտ, որ քանի գնում աճում և թեւաւորում է:

Մի առօրեայ փաստ: Թիֆլիսում ապրում է մի պաշտօնեայ, ռուս, ուղղափառ և անկասկած միապետական. Կիւն է նրա անունը, անգամ դատաստանական պալատի: Դատարանը շատ քիչ է տեսել այդպիսի անբարոյական մի ոչնչութիւն. կաշառակեր, այն էլ ամէնավիւղէր տեսակի, արբեցող, անգամ ամէնազաղէր խմբերի, անբարոյական, մշտական

Հերոս հասարակաց տները... Ո՞վ չի ճանաչում նրան, և ո՞վ չգիտէ, որ շատ անգամ գիշերային օրգիաներից ուղղակի դատարան է գալիս այդ ընտանիքի հայրը, անդամակցելու կամ նախագահելու, վճիռ արձակելու յանուն արդարութեան և օրէնքի, որի հետքերն անգամ չէին մնացել նրա գինովցած գլխում և յղիացած մարմնի մէջ:

Բայց նա չի վունդուում:

Թիֆլիսում կար և մի այլ պաշտօնեայ, նոյնպէս դատարանական, դատախազի օգնական, ծագումով հայ, Օ-լի ազգանունով: Վարում էր նա իր պաշտօնը, ինչպէս շատերը՝ ամսի 20-ին ուձիկ ստանալու համար, և իբրև ոչ անարժան բարձրանում էր իր աստիճանների մէջ: Եւ յանկարծ մի օր կանչւած աւագ-դատախազի առանձնասենեակը, առաջարկութիւն ստացաւ անմիջապէս հրատարակել պաշտօնից: — «Ինչո՞ւ» մընջաց յանկարծակիի եկած մեղադրողը: Մեղադրողը բացեց բերանը. «դուք անարատ չէք ձեր ընտանեկան կեանքի մէջ և անհատարիմ ձեր կնոջ, կենակցում էք տիկին ***-ի հետ... Հասարակութիւնը գիտէ այդ: Դուք արատաւորում էք արդարագատութեան տաճարը»...

Եւ նա վունդուեց:

Վերաբերմունքի այդ «երկու չափ, երկու կշիռն» է, որ ցնցեց և ցնցում է արդարութեան գաղափարի հիմքը կովկասեան ժողովրդի մէջ, հասցնելով երբեմն նրա կասկածոտութիւնը և հիասթափմունքը անասպնների: «Փող տո՛ւր, ես օրինագիրքը կը փոխեմ» ահա ժողովրդական փիլիսոփայութեան բանաձևը՝ դրած ամէն մէկի գլխին իբրև խոր համոզմունք: Եւ երբ ազատ մերկացումներից դուրկ այս երկրում լուր է պտտում շշուկի ձևով թէ այս ինչ մինիստրը, մեծ իշխանը, կամ պալատական կարևոր պաշտօնեան կաշառել է ծախել է, ժողովրդական փիլիսոփայութիւնը սառնասիրտ կերպով տրամաբանում է: «Ի՞նչ կայ զարմանալու»:

Պատմում են հետաքրքիր մի զրոյց, բնորոշ ժողովրդական փիլիսոփայութեան տեսակետից, կատարւած մի հայի և ուսուի մէջ. հայը՝ դեռ կիսահիասթափ, իսկ ուսուր բոլորովին հիասթափուած:

— Տեսնես թագաւորն էլ կաշառք կուտի, հարցրեց հայը իր մտերիմ ուսուին:

— Որ տան, լա՛ւ, պատասխանեց ուսուր սրտի խորքից...

Է. ԱԿՆՈՒՆԻ

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Թ Ա Ի Ա Բ Ա Լ Ե Ա Ն — Զ Ա Բ Ի

1896 թ-ի աշունն էր:

Կովկասի բոլոր եկեղեցիներում ստացւած էին հայոց կաթողիկոսից կոնդակներ՝ հսկումն կատարելու այն հարիւր հազարների յիշատակին, որոնք ընկած էին Տաճկահայաստանում իրենց հայ լինելու համար: Նոյնիսկ ապահով Ալէքսանդրօպօլում սիրտը թախիծով լին հայ ժողովուրդը չգիտեր որ կողմը նայէր, ինչի վրայ յոյս դնէր: Զանգի տխուր հնչիւնները հաւաքել էին եկեղեցում խուռն բազմութիւն: Սեղանի վրայ կանգնած քարոզիչը զգացւած ու խրոխտ ձայնով խօսում էր Յիսուսի խաչելութեան մասին: Նա համեմատում էր այդ մեր

դժբախտ ժողովրդի խաչելութեան հետ և սիրտ էր տալիս ու հաւատացնում, որ չկայ յարութիւն ու վերածնութիւն առանց խաչելութեան և չարքարանքի:

Ժողովուրդը լսում էր քարոզչին, հաշտուում այդ մտքի հետ, և, կարծես, սիրտ առնում: Աւելի դիրազգացները արտասուք էին թափում և շատերը հեկեկալով դուրս էին գալիս տաճարից...

Քարոզիչը Ալէքսանդրօպօլի յաջորդ Բագրատ վարդապետ Թաւաքալեանն էր, մեր վարդապետ ընկեր Զաքին:

Տարիների ընթացքում թափառելով և համբուրելով Մայր երկրի հողերն ու քարերը, հազար ու մի զօկանքներ կրելով, նա աշխատում էր հայ ժողովրդին ներշնչել Յարութեան դաղափարը:

Զաքին պատկանում էր հայ հայրենասէրների պիօներների շարքին, նրանց, որոնց վիճակւած էր նոր և դժուար ճանապարհ բանալ մեր ազգի վերածնութեան համար: Պատելով Տաճկահայաստանի ամենախուլ վայրերը, Զաքին կարողացաւ ձեռք բերել այնպիսի մօտ ծանօթութիւն երկրի պայմաններին, որ ունէին շատ քէրը հայերից: Տրւելով մեր ազգային դատի պաշտպանութեան գործին, նա կանգ չառաւ ոչ մի վտանգի ու ծանրութեան առջև: Մի օր նա քարոզիչ էր, միւս օրը զինուոր: Սովոր ապահով կեանքի, հարկ եղած ժամանակ նա խոյս չէր տալիս լինել ծառայ և հասարակ հացթուխ: Բոլորը կը խոստովանէին, որ մինչև Կովկասում հոգեւորական պաշտօններ վարելը՝ մեր դատի ասպարհում Զաքին ցոյց տւեց օրինակելի անձնակրութիւն և մեծ կամքի ուժ: Տենդային աշխատանքը չանցաւ առանց հետեանքի. նա քարքայեց Թաւաքալեանի առողջութիւնը և վաղաժամ իջեցրեց նրան գերեզման:

Հաւատում էր արդեօք Թաւաքալեանը հայոց եկեղեցու դաւանանքներին կուսակրօնութիւն ընդունելու ժամանակ — մենք այդ չգիտենք: Սա միայն անհերքելի է, որ ինչպէս իր անձնական բարեկամների կամ հակառակորդների մասին խօսելիս, այնպէս էլ եկեղեցում, Թաւաքալեանը մոռանում էր ամէն ինչ և տրւում էր անկեղծութեան: Նրա ծանօթները հաւատացնում են, որ Թաւաքալեանի մշտական անկեղծութիւնը առաջ էր գալիս նրանից, որ եկեղեցու և նոյնիսկ սրբերի վրայ նա նայում էր այլաբանօրէն՝ միշտ այդ անունների տակ ինկատի ունենալով այս կամ այն իր պաշտած, բայց կորած անձնաւորութիւնը:

Թաւաքալեանը մնաց աղնիւ և անկեղծ մինչև իր կեանքի վերջը:

Ափսոս միայն, որ Զաքին չգնաց իր սկզբից ընտրած ուղիղ ճանապարհով, այլ ընկաւ հոգեւորականութեան նեխւած միջնորդը:

Ափսոս, որ նա չթաղւեց իր վաղեմի ընկերների կողքին, նրա սրտին այնքան մօտ վայրերում...

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Ձ Ի Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը

Քաղաքական խոշոր համաստեղութիւնները մնում են անփոփոխ: Թէ երեքպետեան և թէ երկպետեան դաշնակցութիւնները կանգուն են առ այժմ և կը յարատեւեն, քանի դեռ չեն ջնջւի այն պատճառները, որոնք ծնունդ տւին նրանց:

Համաշխարհային մրցման կրկեսում կղզիացուներ նպատակը է: Ամեն մի պետութիւն զինակից է փնտրում, անգամ Մեծ Բրիտանիան ստիպւած է թողնել իր «վեհապան» մեկուսացումը՝ և գրկախառնել փոքրիկ Եսպանիայի հետ, որը կարող է աջակցել նրան՝ ծայրագոյն արեւելքում պայթելիք փոթորիկների միջոցին:

Դեռ ևս մեծ է պատերազմի վտանգը: Եւ որքան աւելի է ամբարում եւրոպական կապիտալիզմը, որքան աւելի են բորբոքում Համաշխարհային շուկայի գրաւման ակորժակները, այնքան աւելի է մեծանում այդ վտանգը:

Բայց նոյնքան ծանրանում է և պատերազմի «պատասխանատուութիւնը»... Մի կողմից՝ մեծ ընդհարումների ազդած սարսափը, միւս կողմից՝ ներքին «սօցիալական պատուհասը», որ ամէն մի երկրում կայ և որ պատրաստ է օգտուել առիթից ու տակն ու վրայ անել զաւամբալ եւրոպայի խարխուլ շէնքը — ահա ծանրակշիւ հանգամանքներ, որոնք այնքան մտահոգութիւն են պատճառում ազգերի ճակատագիրը վարող մինիստրներին և ամենավարագ ու ռազմատենչ վեհապետներին անգամ ստիպում են ներբողներ կարգալ «խաղաղութեան» և «մարդկայնութեան» սկզբունքներին: Այդ ներբողները շին արգելում, սակայն, նոյն վեհապետներին՝ միշտ աւելի և աւելի զարկ տալ միլիտարիզմին, աճեցնել զօրքերն ու նաւատորմները:

Եւ այդպէս յարատեւում է սպառնալից խաղաղութիւնը: Եւ անզօր են մնում միջազգային կօնգրէսները, Համաշխարհային զինաթափութեան հրահրները... Միլիտարիզմի թունաւոր շունչը վարակում է բոլոր պետութիւններին: Երազելի մարդիկ մարգարէանում են, որ Անգլիան ևս Հարաւ-Աֆրիկայի պատերազմից յետոյ պիտի յղանայ ցամաքային զօրութեան հսկայ ծրագիրները, պիտի մտցնէ զինւորական պարտադիր ծառայութիւն, որը խախտելով ռամկավարական դարաւոր տրագիկաները՝ նոր պատուհասներ պիտի ստեղծէ միջազգային խաղաղութեան համար:

Ֆրանսիական պատերազմը վերջացաւ և Ջօն Բուլը այսուհետեւ աղաւ շունչ քաշելով՝ պիտի վերսկսէ իր համարձակ գործողութիւնները հեռաւոր ու մերձաւոր Ասիայում: Եսպանիայի հետ կնքած դաշինքը նոր ուժ կը հաղորդէ նրան: Ցամաքային պետութիւնները և Ռուսաստանը մասնաւորապէս լաւ գիտակցում են այդ ուստի իրենք ևս խնամքով ամրացնում են իրենց դիրքերը, պատրաստելով պաշտպանողական և միանգամայն յարձակողական ընթացքի համար:

Ասիական վտանգը չէ միայն, անշուշտ, որ զբաղեցնում է ցամաքային դիւանագէտներին: Բազմաթիւ են միջազգային կնճռոտ խնդիրները և դեռ կենդանի է աւանդական անտագօնիզմը ցամաքի առանձին պետութիւնների միջև: Այդ է պատճառը, որ վերջին 8-9 ամիսների ընթացքում հանդիսատես եղանք այնքան մեծագոյ ծանուցումների թէ երկպետեան և թէ երեքպետեան դաշնակցութեան կողմից: Երկու քաղաքական համախմբումները շեշտեցին իրենց ներքին անխզելի կապը և իրենց առաքելութիւնը:

Թէ անցեալ աշնան, երբ Նիկոլա [I] այցելեց Ֆրանսիան և թէ ներկայ տարւայ մայիսին, երբ Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Լուրէն փոխայցելութեան գնաց Պետերբուրգ, — մենք լսեցինք միևնոյն ազդարարութիւնը՝ «երկու բարեկամ և զինակից ազգերի մասին»:

Ռուս-Ֆրանսիական դաշնակցութիւնը դեռ ևս ամուր է և երկու երկրներում էլ զգացում է նրա անհրաժեշտութիւնը: Մենք այդ դիտեցինք անզօր-եապօնական դաշինքը կապելու միջոցին, ներկայ տարւայ փետրւարին:

Անգլիան և Եսպանիան տեսնելով Ռուսաստանի սրբորշաւ առաջադիմութիւնը 2ինաստանի մէջ՝ համաձայնութեան եկան ընդհանուր ուժերով պահպանելու statu quo-ն ծայրագոյն արեւելքում, անխախտ պահելու 2ինաստանի և Կորէի անկախութիւնը: Երկու դաշնակիցները բաց են յայտարարում 2ինաստանի դռները բոլոր պետութիւնների համար և իրաւունք են համարում ձեռք առնել միջոցներ, որոնք անհրաժեշտ կը լինեն պահպանելու statu quo-ն ընդդէմ ուրիշ պետութեան:

Այդ իրողութիւնը, ինչպէս և սպասելի էր, մեծ յուզում առաջ բերեց քաղաքական շրջաններում: Ուրիշները ևս վաղուց փնտրում էին Եսպանիայի զինակցութիւնը:

Ռուսաստանը, որի դէմ յատկապէս ուղղած էր դաշինքը, և Ֆրանսիան, որ նոյնպէս ունի իր զինական քաղաքականութիւնը, փութացին պատասխանել անզօր-եապօնական դաշնադրութեանը: Նրանք իրենց կողմից հրատարակեցին, որ իրենք ևս դաւանում են այդ դաշնադրութեան հիմնական սկզբունքները, բայց որ նոյն երկիւղից դրուած՝ իրենք ևս ձեռք կառնեն նախազգուշութիւններ:

«Բաց դռների» քաղաքականութեան ջերմ պաշտպան է կանգնում, ինչպէս յայտնի է, նաև Ամերիկան, որը վերջին տարիներս հանդէս է գալիս, որպէս ծանրակշիւ գործօն հեռաւոր արեւելքում:

Այդպիսով թէ 2ինաստանի ամբողջութիւնն է ակամայ պահպանում, թէ խաղաղութեան գործն է վաստակում, և թէ քարացած վիթխարի պետութեան դռներն են բացում եւրոպական կապիտալիզմի և առհասարակ քաղաքակրթութեան հոսանքի առաջ: Այդ հանգամանքը շատ նշանակիչ է:

Ռուսաստանը և Ֆրանսիան մարտի 19-ի իրենց ընդհանուր յայտարարութեամբ կամեցան ցոյց տալ որ երկպետեան դաշնակցութեան գործողութիւնները չեն սահմանափակում միմիայն Եւրոպայով, այլ որ տարածւում են նաև հեռաւոր Ասիայի խնդիրների վրայ:

Այնուամենայնիւ, չնայած հանդիսաւոր ու յաճախակի ծանուցումներին՝ տարակոյս չկայ, որ «երկու բարեկամ ու դաշնակից» ազգերի յարաբերութիւնները զգալի կերպով պաղում են հետզհետէ: Վերջին երկու փոխադարձ այցելութիւնները շատ անհրապօր էին: Չկայ նախկին խանգավառութիւնը, Չկայ մասնաւոր Ֆրանսիայում: Ֆրանսիական նացիօնալիստները այլ բան էին սպասում հռչակաւոր «ալլիանսից»։ Նրանց անկախութիւնները չ'արդարացան: Ցարի կառավարութիւնը ոչ միայն լսել չի ուզում «րէվանշ»-ի մասին, ոչ միայն ամէն առթիւ իր բարեկամական զգացմունքներն է յայտնում Ֆրանսիայի երդեալ թշնամուն, այլ բնաւ տրամադրութիւն իսկ չի ցոյց տալիս օգնութեան դալու իր զինակցին, անգամ երբ վերջինս ծանր ընդհանր է ապրում: Ապացոյց Ֆաշօգան:

Նոյնպէս և անցեալ տարւայ Ֆրանս-թիւրքական ընդհարումի ժամանակ Ռուսաստանի բռնած դիրքը զայրոյթ միայն յարուցեց Ֆրանսիացիների մէջ: Այն միջոցին, երբ հանրային կարծիքը Ֆրանսիայում՝ խորը յուզած Հայաստանի մէջ կատարուող գաղանութիւններից՝ պահանջում

էր կառավարութիւնից միջամտել նաև յօգուտ Հայերի և նոյնիսկ դարձնել Հայկական Հարցը ընդհարուստ կենտրոնական խնդիր—այդ նոյն միջոցին Ռուսաստանը երկիւղ կրելով «Հայկական ուէֆօրմների» ուրականից՝ շտապեց կանգնեցնել Քրանսիայի սլացքը և քաղաքավարի կերպով հեռացրեց Քրանսիական նաւատորմը Միտիլենից:

Այո, ժամանակակից առաջագիտ ու ողջամիտ Քրանսիան միշտ աւելի և աւելի գալիս է այն գիտակցութեան՝ որ հայրենիքը համեմատաբար քիչ բան է վաստակում «ալլիանսից» և շատ զոհողութիւններ է անում նրան: Միշտ աւելի և աւելի աճում է Քրանսիայում մի որոշ հոսանք—կազմած սօցիալիստներից, արմատականներից և նոյնիսկ «կենտրոնի» մի մասից — որը եթէ իր ամբողջութեամբ հակառակ էլ չէ Քրանս-ռուսական զինակցութեան, յամենայն դէպս պահանջում է այդ զինակցութիւնից՝ յարգել դիւցազնական հայրենիքի տրագիցիաները, յարգել ճնշած ազգերի դատը, թող չտալ որ յանուն «ալլիանսի» մի ամբողջ ժողովուրդ խողխողի արևելեան բռնակորների ձեռքով և կամ անվերջ գալարի չարջարանքի անկողնի վրայ...

Այդ հոսանքը վերջին ընտրութիւններից յետոյ, կարելի է ասել, տիրապետող է պարլամենտի մէջ:

Այդ հոսանքի արտայայտիչն է և կամ յամենայն դէպս նրա ճնշման տակ է արտաքին գործերի մինիստր Գեղկասէ, որը ամէն առթիւ պատրաստակաւութիւն է յայտնում—նոյնիսկ Ռուսաստանին դրդուելու վտանգով— միջամտել ինպատ հայերի և արգելք լինել նորանոր ջարդերին:

* *

Երեքպետեան դաշնակցութիւնը շատ խօսակցութիւնների նիւթ եղաւ վերջերս: Այս տարի չորրորդ անգամն է նա վերանորոգուած: Հրապարակի վրայ շրջում էին աննպաստ լուրեր, պեսսիմիստ մարգարէութիւններ: Վերջին ժամանակներս այդ դաշնակցութեան անդամները ևս բաւականաչափ պաղել էին իրարից: Արդէն առաջներում էլ շատ կենդանի չէր նրանց համերաշխութիւնը:

Ալափօն տարրը, որ աւստրիական քաղաքականութեան կարևորագոյն գործօններից մինն է, չէ հաշտուում պանդերմանիզմի հետ, որը ամէն կերպ խրախուսուում է Գերմանիայի կողմից:

Պրուսսիան — երեքպետեան դաշնակցութեան ղեկավարը — միմիայն ատելութիւն է շարժում չեխերի և լեհերի մէջ իր հակասլափօնական քաղաքականութեամբ: Ամբողջ լուսաւոր աշխարհը նողկանքով լսեց Վիլհելմ կայսրի Մարիէնբուրգում արտասանած ճառը, որ արքայական սանկցիա էր տալիս ազգայնական հալածանքներին:

Աւստրիայի սլափօնները յուզեցին, պարլամենտը փոթորկեց. տեղի ունեցան միջադէպեր, որոնց նմանը չէր տեսնուած պարլամենտական տարեգրութեան մէջ: Ռայխսրատի ամբիօնից չեխ պատգամաւոր Վլոֆաչ միանգամայն իրաւացի դայրագնութեամբ, մոլեգին ոճով նշաւակեց դաշնակից Գերմանիայի վեհապետին և որակեց Մարիէնբուրգի ճառը անմիտ, անամօթ ու նման անականներով:

Բացի պանդերմանիզմի պրօպագանդից կան անտեսական և ուրիշ կարգի խնդիրներ ևս, որոնք թուլացնում են երկու պետութիւնների փոխարարձ վստահութիւնը,

ստեղծելով ներքին տարաձայնութիւններ: Իտալիայի և իր նախկին դահիճ՝ Աւստրիայի յարաբերութիւնները երբէք անկեղծ-բարեկամական շեշտ չեն կրել: Աւանդական անտագօնիզմին աւելանում է և երկու պետութիւնների շահերի ու ձգտումների հակառակութիւնը Բալկաններում: Իտալիան աչք է դրել Բալկանեան թերակղզու արևելեան մասի վրայ, իտալական պրօպագանդը ամենայն եռանդով առաջ է մղում Ալբանիայի մէջ և վտանգաւոր մրցակից է հանդիսանում աւստրիական պրօպագանդին:

Չնայած, սակայն, այդ բոլոր հակառակութիւններին՝ Հուլիոսի, Վիէնայի և Բեռլինի դիւանագէտները բնաւ ցանկութիւն չունին քայքայելու երեքպետեան դաշնակցութիւնը և երեք պետութիւնների ներկայացուցիչները մին միւսի ետեից հանդիսաւոր կերպով շեշտեցին այդ դաշնակցութեան նպատակարարութիւնը:

Պէտք է նկատել, որ երկու խոշոր դաշնակցութիւնները, որոնք կազմակերպում ու դիւսիպլինի են ենթարկում ցամաքային ուժերը՝ չեն արտաքսում կողմնակի, լրացուցիչ դաշնակցութիւններ, որոնց ազդեցութիւնը տարածուում է յայտնի շրջանների վրայ: Այդ օրի համար գաղտնիք չէ այն դաշինքը, որ կապուած է 1897-ին Աւստրիայի և Ռուսաստանի միջև և որի նպատակն է ապահովել *status quo* ն Բալկաններում: Քիչ առաջ այդ դաշինքը վերանորոգեց և հետևողականութեամբ գործադրում է՝ մշտապէս ալեկոծող մի այնպիսի վայրուժ, որպիսին է Բալկանեան թերակղզին:

Այդ օրի համար գաղտնիք չէ նմանապէս այն բախտաւոր մերձեցումը, որ առաջ եկաւ վերջին ժամանակներում Քրանսիայի և Իտալիայի միջև — երկու քոյր ազգութիւններ, որոնք կոչուած են համերաշխ գործելու և որոնց բաժանել էին անցքերից մէկն է դիտուում, նպատակ ունի առաջ մղել երկու լատին պետութիւնների շահերը Միջերկրականում:

Այդ մերձեցումը, որ ժամանակակից պատմութեան ամենածանրակշիռ անցքերից մէկն է դիտուում, նպատակ ունի առաջ մղել երկու լատին պետութիւնների շահերը Միջերկրականում:

Այդպիսով զինակցութիւնները միշտ աւելի և աւելի փոխարինում են կղզիացած վեճակին և տանջուած մարդկութիւնը կարող է թերևս յուսալ, որ եւրօպական յարաձուլ հաւասարակշռութիւնը կը կարողանայ մի կողմից՝ քայլ առ քայլ մեղմել սպառազէն խաղաղութեան սարսափները, միւս կողմից լուծում տալ—լսալաղ ճանապարհով, առանց ընդհարումների—այն բոլոր խնդիրներին, որոնք մշտնջենաբար փոթորկում են Արևելքը:

ՀԱՅԱՍԷՐ ՊՐՕՊԱԳԱՆԴԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՍ

(ՆԱՄՄԱԿ ԲԵՐՂՆՆԻՑ)

Միութարական մի երևոյթ է, որ հետզհետէ հայոց դատի շուրջը համախմբուում են ականաւոր եւրօպացիներ, որոնք աշխատում են գէթ մասամբ թեթևացնել հայ ժողովուրդի տառապանքները և նպաստել հայկական արդար պահանջների իրագործման:

Եսական ու նիւթապաշտ են գերմանացիները, նրանց ամբողջ պատմութեան մէջ չէք տեսնում մի դէպք, որի հիմքը լինէր մարդասիրութիւնը, չէք յիշում մի զոհաբերութիւն, որի նպատակը լինէր այս կամ այն ձընշ-

ած ազգութեանը ազատութիւն պարզեցը Գերմանիան սկզբից մինչև վերջ եղել է դաժան թողլերի դիմաց և այդ նոյն դաժանութիւնը նա պահպանել է նաև հայերի վերաբերմամբ: Ապացոյց վերջին տարիների արեւնոտ անցքերը և Գերմանիայի բռնած ընթացքը... «Պոմբ-րանեան մի զինուորի ոսկորները չեմ փոխիլ ամբողջ հայութեան հետ», ասում էր Բիսմարկ, և Գերմանիան մինչև օրս էլ հաւատարիմ է մնացել այդ անսիրտ դաւանանքին:

Սակայն հասարակական կարծիքը թէև խիստ դանդաղ թերուում է հետզհետե գեպի հայերի կողմը: Հայ ժողովրդի տառապանքները և հայ յեղափոխականների անձնագոհ ու հերոսական գործողութիւնները սկսում են արձագանք գտնել նաև գերմանական սրտերում: Հայասէր պրոպագանդը այստեղ ևս կամաց-կամաց հարթում է իր ճանապարհը: Այդ ուրախալի երեւոյթի նոր ապացոյցը կարելի է դիտել ամսոյս 6-ին և 26-ին Բեռլինում տեղի ունեցած «հայկական երեկոյթը» և հռչակաւոր Բերնշտայնի հրապարակական բանախօսութիւնը հայոց հարցի մասին:

I

Հայկական երեկոյթը տեղի ունեցաւ «Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան» նախաձեռնութեամբ Բեռլինի յայտնի Germania դահլիճում: Ամէն ջանք գործ էր դրւած՝ այդ առաջին երեկոյթը գերմանացիների համար հետաքրքիր ու գրաւիչ դարձնելու և միևնոյն ժամանակ նրա միջոցով հայոց անցեալի ու ներկայի մի ամփոփ պատկերը տալու:

Այդ ջանքերը պսակեցին կատարեալ աջողութեամբ. ներկայ էր մեծ բազմութիւն ամենաընտիր հասարակութիւնից. աչքի էին ընկնում տասնեակներով պրօֆէսորներ, ուսիստադի անդամներ, հրապարակախօսներ և ուրիշ հասարակական գործիչներ: Երեկոյթին մասնակցում էին աչքի ընկնող ուժեղ գիտական ու երաժշտական շրջաններից, օրինակ. պրօֆ. Հարնակ, պրօֆ. Հալեր, դօքտ. Լեպսիուս, դօքտ. Ռօրբախ, կայսերական օպերայի երգչուհի Գեստինն, նկարիչ Նատէլ և Ն:

Երգեցին նախ ազգային ու ժողովրդական երգեր, տրեցին կենդանի պատկերներ, խօսեցին ճառեր:

Առաջին ճառախօսն էր աշխարհահռչակ գիտնական պրօֆ. Հարնակ, որը հակիրճ ներկայացրեց հայոց եկեղեցու պատմութիւնն ու էութիւնը, շեշտելով գլխաւորապէս այն փաստը, որ հայերը կուլտուրական մի ժողովուրդ են, որը ամենից առաջ իբրև ազգային ամբողջութիւն՝ ընդունել է քրիստոնէութիւնը և երկար ու ձիգ դարերի ընթացքում կռիւ է մղել իր լեզուն, կրօնը և ազգային ինքնուրոյնութիւնը պահպանելու համար:

Դօքտ. Լեպսիուս, յայտնի գրքի հեղինակը խօսեց հայերի կուլտուրական դերի մասին Արևելքում. երկար ծանրացաւ Հայաստանը բարեկարգելու անհրաժեշտութեան վրայ, ցոյց տւեց այն մեծ, անգնահատելի ծառայութիւնները, որ կարող են անել հայերը գերմանացիներին, սրանց խոշոր ձեռնարկութիւնների մէջ Արևելքում: Անատոլիայի երկաթուղին շինող ինժինեըները միաբերան վկայում են, որ այդ գործի մէջ ամենաընդունակ աշխատակորները հայեր են եղել: Ուստի և—եղբարիակեց համակրելի ճառախօսը—հայերը միանգամայն արժանի են Գերմանիայի հովանաւորութեանը:

Դօքտ. Ռօրբախ, որ 3-4 անգամ ճանապարհորդել է Փարս Ասիայում և լաւ ճանաչում է հայ ժողովրդին, համառօտակի ուրազածեց հայի նահապետական կենսքը, նիստ ու կացը և շեշտեց այն միտքը, որ հայերը գլխաւորապէս երկրագործ ժողովուրդ են, աշխատասէր և ընդունակ:

Բերլինի բազմաթիւ լրագիրներ յօդաճներ ներկայացրին երեկոյթին, դրւատեցին հայ ուսանողների հայրենասիրութիւնը և շեշտեցին իրենց համակրանքը դէպի հայ ժողովրդի դատը:

II

Յունիսի 26-ին երեկոյեան ժօռ 3,000 հանդիսականների առաջ Երուսաղէմ Բերնշտայն սկսեց իր բանախօսութիւնը: Նրան լսում էին ամենախորին ուշագրութեամբ. Բերնշտայն այն սակաւթիւ գլուխներից է, որոնք հասարակական-քաղաքական ամէն մի կնճռոտ պրօբլէմի հանդէպ անհրաժեշտ են սեպում՝ զինել նախ և առաջ գիտական մտքին յատուկ մեթօդով, սեղմ, անողորմ տրամաբանութեամբ և միանգամայն անաչառութեամբ: Տաճկահայկական մթնոլորտում նշմարող ամէն մի խոշոր երեւոյթ նա համեմատութեան էր դնում նոյն կարգի երեւոյթներին հետ՝ արեւմտեան կեանքի անցեալում ու ներկայում: Իրականութեան չոր ու պաղարիւն վերլուծումը տեղի էր տալիս երբեմնապէս զգայուն սրտի ցասման արտայայտութիւններին, երբ հարկաւոր էր իտե՛ս դնել հայկական մարտիրոսութեան աղեխարշ էջերը և կամ նշաւակել Բիւլօվի անարգ քաղաքականութիւնը:

«Հայ ժողովրդին մենք չենք ճանաչում» — այսպէս սկսեց Բերնշտայն: Նա հեռու է միջազգային հաղորդակցութիւնից և սրանից քիչ առաջ շատ շատերը եւրօպացիներից գաղափար անգամ չունէին նրա գոյութեան մասին: Բայց հայ ժողովուրդը շատ հետաքրքրական է մեզ համար. հայկական հարցը մի մասն է արեւելեան մեծ խնդրի, որը դեռ պիտի շարունակէ խռովել միջազգային խաղաղութիւնը: Թիւրքիայի ամբողջ վարչական սիստէմը մահ է միայն բերում հպատակ ժողովուրդներին, թիւրք ցեղը չի թողնում, որ ուրիշ ցեղերը առաջ գնան, որ առհասարակ կուլտուրան առաջ ընթանայ: Նա աւերում է Հայաստանի պէս վայրերը, որոնք դրախտ կարող էին դառնալ: Որո՞նք են արդեօք թիւրք ժողովրդի «լաւ յատկութիւնները», որ ոմանք շեշտում են յաճախ: Նւաճող ազնւականութեան բարբարոս յատկութիւններն են դրանք — և ուրիշ ոչինչ:

Եթէ այլևայլ ցեղեր թիւրքաց հպատակութեան տակ դարերի ընթացքում պահպանել են իրենց կրօնը և ազգայնական ստացածքները — դա ապացոյց չէ տաճկական համբերողութեան, այլ միայն այն փաստի՝ որ թիւրք ցեղը իբրև նւաճող տարր՝ անընդունակ է եղել մարսել այլադաւան տարրերը: Կայսերական-պապական բռնապետութիւն է Թիւրքիան, սուլթանը՝ նրա աշխարհական և միանգամայն կրօնական գլուխը: Այդ իրողութեան վրայ է կառուցւած ամբողջ Տաճկաստանը և դրանից է հետևում այն բացարձակ թշնամական դիրքը, որ բռնած է սուլթանը և առհասարակ մահաճակատները դէպի ամէն քաղաքական առաջդիմութիւն: Ճնշումը արտագրում է հակաճնշում: Եւ հէնց որ մի ունէ քրիստոնեայ ժողովուրդ ապստամբում է, հէնց որ յեղափոխական կօմիտէներ են կազմակերպւում՝ ազ-

գային ազատութեան գործը առաջ մղելու համար, վրայ են հասնում արիւնոտ ջարդեր, անգէն ու անեղ մասսայի կոտորած... Այդպէս էր Յունաստում, Վոլդաւ-Վալախիայում, Լիբանանում, Սերբիայում ու Բոլղարիայում. այդպէս էր Հայաստանում... .

Բերնշտայն երկարորէն ծանրացաւ Հայաստանի ներկայ վիճակի վրայ, նկարագրեց հայ ժողովրդի անտեսական ու սօցիալական ծանր պայմանները՝ հարկային սիստէմը, փաշայական կամայականութիւնները, սովը, կառավարչական տէնորը: Եւրօպան անտարբեր էր մնում նոյնիսկ ահռելի ջարդերի միջոցին և ահա հարազատ ժողովրդի յուսակտուր վիճակը տեսնելով՝ հայ յեղափոխականները մի թափով գրաւեցին Օսմանեան բանկը: Ոչ դրի չսպանեցին, այլ միայն ամրացան բանկի մէջ՝ Եւրօպային հարկադրելու համար: Դրան հետեւեց դարձեալ կոտորած Պոստում... .

Բերնշտայն միաժամանակ խօսեց և պետութիւնների յարաբերութիւնների մասին, որոնք պայմանաւորել են հայկական ճգնաժամի ընթացքը. շեշտեց միջազգային սօցիալ-դէմօկրատիայի դերը հայկական խնդրում և իվերջոյ մի տաք, կորովի կոչ ուղղեց հանդիսականներին:

«Մեզ այժմ հնարաւորութիւն է տրւած մեր ձայնը բարձրացնելու յօգուտ մի ժողովրդի, որի դէմ դանդաղ բայց յամառ կերպով մղուում է բնաջնջման կռիւը և ես յոյս ունեմ, որ ոչ մէկը չի գտնւի ձեր մէջ, որը չմտածէ, թէ մի անգամ ընդ միշտ պէտք է վերջ դնել Թիւրքիայում տիրող յուսի անտեսութեան... Հնչեցնենք մեր բողոքի ձայնը և այնքան բարձր հնչեցնենք, որ նրա արձագանքները հասնեն պետական կանցլերի ականջին: Հայերին պէտք է օգնութիւն տրւի. սուլթանական անարգ ակտիւմը պէտք է անհետանայ աշխարհի երեսից»... .

Դասախօսութիւնը շուտով լոյս պիտի տեսնի գերմաներէն լեզուով «Եւրօպ. Հայ. Ուսանող. Միութիւնը», որ այդ կոնֆէրանսի նախաձեռնողն էր, մտադր է նոյնը հրատարակել Փրանսերէն և հայերէն:

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Բ Բ Ի Ի Ս Է Լ Ի Հ Ա Մ Ա Ժ Ո Ղ Ո Վ Ը

ԱՆԱՍՏՈՒ Քրանս հետեւեալ կոչն է հրատարակել «Պրօ Արմենիայ» № 18-ում Բրիւսէլի համաժողովի ատիթով, որ տեղի պիտի ունենայ յուլիսի 17-18-ին:

Դանիայում, պարլամենտի, համալսարանների և բարձր հոգևորականութեան անդամներ՝ ինկատի առնելով հայ ժողովրդին սպառնացող մեծ վտանգը, առաջարկել են հաստատել մի գործակցութիւն— զուտ մարդասիրական, առանց քաղաքական բնաւորութեան— բոլոր քաղաքակրթութեւն ազգերի մէջ՝ ինպատո հոգեվարք ազգութեան:

Այդ նախաձեռնութեան վրայ ապրիլի 5-ին Պարիզում միջազգային մի ժողով պպ. Էտկինի, Մարսէլ Սամբայի, Ժօրժ Բրանդէսի, դը Ռօբէրտի ներկայութեամբ քւէարկեց հետեւեալ որոշումը.

«Ըստ կարելոյն շուտ, տեղի պիտի ունենայ բոլոր երկրների մէջ գումուղ՝ Հայաստանի բարեկամների մի խորհրդաժողով»:

Ուստի և Եւրօպայի բոլոր երկրներից նշանաւոր մարդիկ պիտի գումարւին Բրիւսէլում մի համաժողովի մէջ առաջինայ յուլիսին, որպէս զի բարձրաձայն լսելի անեն

բաղձանքը՝ դադարեալ տեսնել վերջապէս հայերի կրած հալածանքները:

Ժամանակը սուղ է: Զօրանոցները բարձրանում են Ձէյթունում և Սասունում: Ազդարարում են նոր գրւգրուածների մասին:

Չարաշուք ամիսները մօտենում են: Յուլիսից մինչև հոկտեմբերն են կատարուում ջարդերը:

Մարտիրոս ժողովրդի մնացորդները կարելի է փրկել միայն բոլոր կուսակցութիւնների պատկանող մարդկանց միջազգային համաձայնութեամբ: Այդ համաձայնութիւնը ապահոված է:

Փրանսիայում՝ Դընի Կօչէն ու Ժօնէս, Հօլլանդիայում՝ դօբօթօր Կիւպեր և Վան Կօլ միացած են հայերին պաշտպանելու համար:

Մենք թախանձում ենք բոլոր այն մարդկանց, որոնք ունեն իրենց սրտում սէր դէպի մարդկային ցեղը՝ յարել Բրիւսէլի հայասէր Կօնգրէսին և մեծացնել վեհանաձայները, որոնք պիտի հնչեցնեն Եւրօպայի կառավարութիւնների և աշխարհի քաղաքացիների ականջին ամենաարգար գանգաւոր, որ երբեկցէ մի ժողովուրդ արձակել է երկրի վրայ:

ԱՆԱՏՈՒ ՔՐԱՆՍ

Temps-ի մէջ (յուլիս 29) կարգում ենք.

«Յուլիսի 17-ին և 18-ին պիտի գումարւի Բրիւսէլում հայասէրների միջազգային համաժողովը: Բոլոր կուսակցութիւնների, բոլոր կրօնների և փիլիսոփայական շխարհների պատկանող ժողովի յայտնել են իրենց կողմնակցութիւնը: Ընդհանուր խորհրդակցութեամբ նրանք փնտրելու են գործնական միջոցներ սաղբիւր եւրօպական կառավարութիւնների ու հանրային կարծիքի վրայ և շահագրգռելու նրանց հայկական հարցով: Ահա մի շարք ականաւոր կողմնակիցների անունները.

- Գերմանիա. — Ա. Բէքէլ, Է. Բէքնշտայն, Ռայխստագի անդամներ, Ա. Ֆրիդլ, պրօֆ. Պ. Մայէր, դօքտ. Ա. Ռիխտեր ևււն, Անդլիս. — Տիկ. Ս. Ֆրիդլ. Կալէնտի, պարլամենտի անդամներ՝ Ջեմս Բրայս, Ջօն Բեօրնս, Սիբ Ջօն Կեննեյէյ, Ռօբեր Ռայթ, Մ. Շիւս, Ժ. Սուֆենան ևււն, Ա.ԻՍՏՐԻԱ. — Տիկ. Եւ պ. Ջուստեր, Բելգիա. — Կոմսուհի Շտայնլէն-Ջալշտայն, պետական մինիստր Լեփօն, սենատօրներ՝ Հուգօ դը Լեօնէ, Հ. Լաֆօնէն, Սըլի-Լօնշան, պարլամենտի անդամներ՝ Դեստրէ, Պօլ Յանսօն, Է. Վանդերվելդ, պրօֆէսօրներ՝ Հելտօր Դընի, Է. Նիս ևււն, ԴԱՆԻԱ. — դը Շեպեդ, Ժօրժ Բրանդէս ևււն, ՖրԱՆՍԻԱ. — Ակադէմիայի անդամներ՝ Անատօլ Յրամս, Լավիս, կոմս դը Մէօն, Ժիւլ Լեօնտր, ինստիտուտի անդամներ՝ Ֆրեդերիկ Պասսի, Լուի Հալլէ, Պօլ Մայէր, Միշէլ Բրէալ, Պօլ Վիլլէ, Պասսեօրի ինստիտուտի անդամներ՝ Է. Դիւլիօ, դօքտ. Ռու, սենատօրներ՝ Դրօն, սենատի փոխնախագահը, Ժօրժ Կլէմանսօ, Դելպէշ, Է. Լաբիշ ևււն, պարլամենտի անդամներ՝ Այնար, Դընի Կօչէն, Դիստուրնէլ դը Կօնստան, Յլուբան, Ժան Ժօնէս, Կամիլ Պելլուան, Յրամսիս դը Պրեսամսէ, Ռուանէ, Սամբա ևււն, ՀՕԼԱՆԴԻԱ. — Բարօնուհի Վասկէլիշ, Ա. Ռիտտեր, Ֆերլօլդ, դօքտ. Բարդ դը Լաֆայ, անդամ խաղաղութեան միջազգային բիւրօյի, ԻՍԱԼԻԱ. — Սենատօր Ասիօլ, պարլամենտի անդամ Լնրիկօ Ֆերրի, Է. Մօնետա, պրօֆէսօրներ՝ Մանդատո ևւ Սյիլիօն Գլամիլ ևււն, ՌՈՒՍԱՍՏՈՒՆ. — Է. դը Ռօբէրտի, պրօֆ. Գամբարօլ, Սեւեօսով, «Նօլօստի»-ի թղթակից ևււն ևււն»:

«Մարդկային իրաւունքների Դաշնակցութեան» (Ligue des Droits de l'homme) Բրեստի ձիւղը յուլիս 14-ի իր ժողովում որոշել է.

1) Շնորհաւորել այն քաղաքացիներին, որոնք կազմակերպում են Բրիւսէլի համաժողովը հայկական խնդրով

զբաղելու համար. շնորհաւորել մասնաւորապէս պ. Պիէռ-Քիառին, որը դարձել է ախոյեան այդ մարդկային դատին:

2) «Հրաւիրել Մարդկային իրաւունքների Դաշնակցութեան» կենտրոնական կոմիտէին՝ ուղարկել մի ներկայացուցիչ Բրիւսէլի համաժողովին և խնդրել բոլոր տեղական ձեռնարկներն՝ արտայայտել միևնոյն ցանկութիւնը:

* * *

Քաղաքօրէն բերում ենք Temps-ի մի խմբագրականը՝ *Orient* վերնագրով:

«Կ. Պոլսի մէջ շարունակում են պտտել ամենաանաւոր շուկաներ՝ թիւրք կայսրութեան որոշ մասերի վերաբերմամբ: Արդէն մի քանի շաբաթից իվեր Սասունի և Մուշի ազգայնակութիւնը ենթակայ է ոչ միայն սահմանափակում, որը միանգամայն հասկանալի է դառնում է չէրքէզիների հոսանքի պատճառով, այլև ճնշողական գործողութիւնների, որոնք մէջ փորձառու ազգայնակութիւնը տեսնում է ազգարայներ մի նոր փոթորիկ:

Մարդիկ յուզւոյն արեւմուտքում՝ այդ յուսակտուր ճիչերը լսելով: Փրանսիական մի քանի պատգամաւորներ որ ներկայացուցիչ էին պարլամենտի բոլոր կուսակցութիւնների՝ ծայրագոյն ձախակողմից սկսած մինչև ծայրագոյն աջակողմ — միացած ընդհանուր մի ցանկութեան մէջ՝ ազատ պահել մարդկութիւնը սարսափելի եղևունակործակ վերանորոգումից՝ դիմեցին Հանրապետութեան արտաքին գործերի մինիստրին և ազգարարելով սպառնացող վտանգի մասին՝ խորհուրդ տւին նրան ձեռք առնել որոշ միջոցներ, որոնք թէեւ շատ էլ ազդու չէին թուում նրանց, բայց զէթ նպատակ ունէին յայտնել ում հարկն է. Ֆրանսիայի մնայուն ու գործն համակրութիւնները:

Պ. Դելկասէ վերստին շեշտեց այն հոգատար ուշադրութիւնը, որով նա վերաբերում է միշտ այնքան սուրբ մի դատին:

Մինիստրը պարտաւորեց ստեփանայ բաւարարութիւն ապ սարսափած ազգաբնակիչութեանը, անյապաղ Մուշ ուղարկելով Ֆրանսիայի կողմից մի ներկայացուցիչ, վկայ լինելու, թերևս նաև սանձահարելու չէրքէզիների ձեռնարկութիւնները:

Սյդ դիտաւորութեան սոսկ հրատարակուած կարողացու փոքր ինչ հանգստացնել դժբախտներին, որոնք կարունակ զգում են իրենց ենթակայ ունէ կիսաբարբարոսի քմահաճ հարւածներին:

Սյդ տեսակէտից պէտք է ուրախ լինել միջազէպի համար:

Բայց նոյն միջոցին, երբ հորիզոնը ոկուում է քիչ-շատ պարզել Մեծ Հայաստանի մէջ, ամպերը լարձաւորում են կիլիկիայի և Տավրոսի կողմերում:

Զէյթունից, Հաճինից, Ադանայից, Սիսից ծանր ընդհարումների լուրեր են հասնում մեզ: Ամենահաւոր հանդամանքն այն է, որ Զէյթունի շրջակայ գիւղերում մահաէզակահաններին վառող, զնդակ և զէնք են բաժանում: Դա քաղաքացիական մի կռիւ է, որ պատրաստում է այդ վայրի քրիստոնեաների դէմ: Հիւք կայ կրկիւղ կրելու մի նոր եղևունափորձից ընդդէմ Զէյթունի, այդ հպարտ միջնաբերդի, Տավրոսի բարձրութեան վրայ կանգնած հայկական այդ առաջապահակի, որը 1896-ին կարողացաւ երկու ամսւայ հերոսական և անյաղթելի դիմադրութիւն ցոյց տալ կարիսայի յաղթող Էգէէմ փաշային:

Զէյթունը, արժիւնների այդ լուճը, որ թառած է Տավրոսի բարձր ու անաւիկ կատարին՝ ունի քրիստոնեայ մի քաջ ազգայնակութիւն, ոտից ցղուել զինւած, ժանգոտականապէս անվիճելու, վարժած սերնդէ-ներուց զէնք խաղացնելու:

Դա մի փառահեղ պատմութիւն է, մի տեսակ լուսնական և շինական զիւլցազնելոյութիւն, որ խաղաղել է այդ լարձուցնների վրայ, ուր սպասութեան ուղին ու բարբերը, առնական հայրիմասիրութիւնը պահպանել

են անյթար, ինչպէս լեռնապալմենների կուսական ձեռները: Միշտ սուրն ու հրապանք ձեռքին՝ զէյթունցիները իրենց արիւնով գնել են գրեթէ ազատ սարելու իրաւունքը:

Բաղամթիւ ներդաշնակուող նշաններից երեւում է, որ մաս ապագայում լուսնի փորձ պիտի արի Հայաստանի այդ սուր և ապահով վայրի դէմ: Յուսանք, որ Եւրոպան կը կարողանայ այդ ձեռնարկի առաջն առնել և յիշեցնել թիւրքերին, որ հարկաւոր է մտնել վերջապէս ռէֆորմների ճանապարհը:

Քաղաքակրթւած աշխարհի ուշադրութիւնը շուտով կուղղւի շտաշումով այդ խնդրի վրայ, որը ներկայի ամենամանր խնդիրներից մինն է, շնորհիւ այն համաժողովի, որը պիտի կայանայ յուլիս ամսում Բրիւսէլի մէջ, ուր կը դուժարւին—իրենց համախրանքը յայտնելու և գործնական առաջարկներ ձեւակերպելու համար — ոչ միայն բոլոր ազգերի ներկայացուցիչներ և պարլամենտների անդամներ, այլև ամէն տեսակ կարծիք դաւանող մարդիկ՝ ընկերավարութիւնից սկսած մինչև արքայականութիւն:»

* * *

Պարիզի *Le Signal* թերթը գրում է.

«Եթէ հաւասանք վերջերս հաղորուած տեղեկութիւններին — և ոչ մի առիթ չկայ կասկածելու նրանց ճշմարտութեան մէջ — սուլթանը պատրաստում է նոր կոտորածներ անել Եւրոպայի անտարբեր աչքի առջև. բանից դուրս է գալիս նոյնիսկ, որ Մեծ Մարդասպանը հրամայել է սկսել Մասունից, ուր սակայն դեռ կենդանի մնացած հայերը գիտեն, թէ ինչպէս պիտի մեռնել: Ծուռով ջարդերը կընդարձակւին և արդէն ուշ կը լինի կանգնեցնել. մի քանի ժամանակից յետոյ մարդասպանի հաշուով այլևս հայ չպիտի մնայ:

Մեր արտաքին գործերի մինիստրը, որ միշտ երկիւղ է կրում, մի գուցէ եւրոպական բարդութիւններ առաջ գալով՝ խանգարեն այն բախտաւոր անցքերի շարքը, որոնք տարօրինապէս հեշտայրել են նրա գործը դիւանատան մէջ, — մեր արտաքին գործերի մինիստրը պէտք է այս անգամ ձեռք առնէ կորովի միջոցներ՝ վիժեցնելու համար այդպիսի մի դաւադրութիւն: Պ. Դելկասէ արդէն նախազգուշացրած է այն դիմումով, որ արին պարլամենտի անդամներ պպ. Դընի Կօշէն, Ալբեր դը Մեօն, Պրեսանսէ և Ռայքերտի, որոնք միացել էին համբաշխութեան սքանչելի մի թափի մէջ յօգուտ նալածական հայերի: Եթէ այդ նախազգուշացումից յետոյ պ. մինիստրը ձգձգէ և ուշացնէ Փրանսիական մի գործակալի այն կողմերը ուղարկելը, որ նա խոստացել է, — ապա մենք իրաւունք կուենանք հաշիւ պահանջել նրանից թափւած արիւնի համար: Նրա ստանձնած պատասխանատուութիւնը կը լինի հրագին և մենք այլևս վստահութիւն չենք ունենայ նրա վրայ:

Պ. Դելկասէ իրաւունք ունի յիշեցնել Պոլսի Ֆրանսիական դեսպանին նրա պարտականութիւնը և պահանջել նրանից կորովի միջատութիւն ինպատտ անմեղ զոհերի, որոնք աւելի հետաքրքիր են, քան պ. Կոնտանի սրախն մաս դանուող ձեռնարկուները: Մենք, նախազգուշացրած լինելով, իրաւունք կուենանք խիստ հաշիւ պահանջել պ. Դելկասէից իր թերացումների համար, եթէ Քէ Դ'օրսէի պալատում փակւած՝ յամառութեամբ խցկէ իր ականջները դրա աղմուկի դիմաց և թողնէ որ իր յանցանքով մի նոր ջարդ կատարուի:»

* * *

Վիեննայի *Die Information* յայտնի կիսապաշտօնական թերթին հաղորդում են Պոլսից (յունիս).

Ռուսայի հիւպատոս Տուժանսկի, որ անցեալ աշնանից հաստատել էր Մուշի կողմերում, անսպասելի կերպով հեռացաւ այդ շրջանից: Թուում է թէ պ. հիւպատոսը մեծ աջողութիւններ չուենցաւ օրթօքօքութիւնը տարածելու. իր առաջելութեան մէջ, Հիւպատոսի հեռանալուց

յետոյ խժոճութիւնները վերսկսեցին Մեծ, Թալան, բռնաբարութիւն Չէրքէզ գաղթականները զրաւել են գաշար: Կասկած չկայ, որ Սասունի դէմ յղացուած է մի սոսկալի գաւաղութիւն Սասունը այն լեռնային վայրերից մէկն է, ուր հայ աղգաբնակութիւնը պահպանուել է իր հինաւուրց սաղապան լեռնազոհները: Ինչպէս Չէթունը կիլիկիայում, ինչպէս Լիբանանը եւ Մծուտնեղոմ Սասունը վաղուց իվեր կարողացել է պահպանել իր կիսանկախ գոյութիւնը՝ շարունակաբար կռիւ մղելով վայրենի արիւնարբու հորգանների դէմ: Անցնալ տարի կառավարութիւնը փորձեց զօրանոցներ կանգնեցնել Սասնոյ բարձրութիւնների վրայ՝ սասունցիներին վերջնականապէս ընկնեցնելու համար: Բայց արիւնարբու սասունցի կանայք յետ մղեցին թշնամուն:

Այս անգամ կառավարութիւնը որոշած է ըստ երեւոյթին ընտելնել անել ըմբոստ սասունցիներին: Տեղի կուենան, անտարակոյս, արիւնահեղ ընդհարումներ, որովհետեւ հպարտ լեռնականները չեն թող տայ ոչխարների պէս խողովոյել իրենց: Չպէտք է սոռանալ, որ հայ ապստամբների շէֆ Անգրամիլը դեռ թագնուած մնում է Սասունի լեռներում»:

Նոյն թերթին հազորդում են Պոլսեց (յունիս).

«Ահաւոր լուրեր են հասնում կիլիկիայից: Կարմիր ու ճերմակ տէօրը թագաւորում է ամբողջ երկրի մէջ: Հարկահանները տանջում են քրիստոնեայ աղգաբնակութիւնը: Կամայականութիւններն ու սպանութիւնները սովորական բաներ են: Բայց ամենամանրը այն է՝ որ կառավարութիւնը վառող ու փամփուշտ է բաժանում Չէթունի շրջակայ գիւղերի մահմէդականներին: Գուցէ նորից սկսել գրոհը հերոսական Չէթունի դէմ, որը վերջին ապստամբութեան միջոցին յետ էր մղել Լարիսայի հերոս Էդէմ վաշայի զօրքերը: Իս թուում է հաւանական»:

Չէթունցիք մի ճշմարիտ պատուհաս են թիւրքայ կառավարութեան համար: Ամբայած Տավրոսի անառիկ կարճուքների վրայ, սաից ցլուխ գինւած՝ նրանք դեռ 18-րդ դարի վերջերից սկսած՝ մշտնջենական կռիւներ են մղել սուլթանական զօրքերի դէմ: Չէթունցիք սիրահար են իրենց դարաւոր ազատութեան: Արդիւ Համիդը, ինչ քնով էլ լինի, ուզում է խոնարհեցնել այդ կամակորներին: Անկարող լինելով անել այդ բայարձակ պատերազմի միջոցով, նա ճգտում է զարտուղի ճանապարհներով անվնաս դարձնել Չէթունցիներին»:

* * *

Ալքանիսն որ մինչեւ ցարը Օսմանեան պետութեան ամենակարեւոր զինուորական ուժերէն մէկը կը նկատուէր, սկսած է սպառնական դիրք ընել սուլթանական կառավարութեան դէմ եւ անկախութեան ձգտումներ ունենալ: Ալքանիս մէջ աւելի են աւելի լսելի կը դառնան Պերլինի վեհաժողովին պատգամաւոր ալքանացի Վասո փաշային նշանաբանը. «քեզուարէ փէր շքեքնիս»—Ալքանիսն ալքանացիներուն:

Սկսած ըլլալով արտասահմանի մէջ այլեւայլ կմթական հաստատութիւններէն, որոնք ուժ կուտային իրենց ազատագրական գաղափարներուն, ալքանացիք վերջերս դիմեր են աւելի լուրջ մեղքներու կազմեր են յեղափոխական ընկերութիւններ, հաստատոք են ազատ թերթեր:

Այդ ազգային շարժման նպաստող կարեւոր թերթերէն մէկն է «Ալքանիսն», որ իր ճիւղ տարի է կը հրատարակուէր Հոսոմի մէջ թերթերէն եւ իտալերէն լեզուներով: Վերջերս թերթաց ղեկավարն ղեկավարներուն վրայ իտալական կառավարութիւնը ազգաբարձ ըլլալով թերթին խմբագրին, որ սուլթանի դէմ կձու լեզու շքանցնէ, խմբագրութիւնը նախամտաբ համարած է հեռանալ, բան փոխել իր թերթին ուղղութիւնը:

Այժմ թերթը սկսած է հրատարակուէր Ժընէվի մէջ, Քրանսերէն եւ թիւրքերէն լեզուներով, աւելի յարձակողական եւ յեղափոխական ընտրութեամբ: Առաջին թիւը լոյս տեսած է արդէն, որուն մէջ թիւրքերէն յօլուած մը կայ «Մէշէրէթի»-ի մուղտանը խմբագրին, սուլթանի անգիտակից գործիք, Ասմէր Բիզայի դէմ:

«Ալքանիս» թերթի կուսակցութեան քաղաքական պահանջներուն ծրագրի կարեւոր կէտերը ասոնք են.

- 1) Ալքանական բոլոր նահանգները մէկի վերածել.

2) Հնդհանուր կառավարելը սուլթանէն ընտրել եւ Պոլսոյ ղեկավարներէն վաւերացի:

3) Ազգային ժողով մը կազմել, որ զբաղի ներքին վարչութիւնով:

4) Երկրին պահակազօրքը պիտի կազմել քրիստոնեայ եւ մահմոդական ալքանացիներէ:

5) Հնդհանուր ներում բոլոր քաղաքական յանցանքներու համար դատաւարուած եւ աքտրուած ալքանացիներուն:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՐԵՒԻՆԵԱՆ ԲԻՒՐՆ ստացած է՝

ՔԱՐ կօմիտէից N° 173—Փէլիքս, Աւօ Մ., Թաղ. X, Գարնեց, Գ., Արձիւնի, Յս. Ն. 5-ական ուրբի, Տիգօ Թ., Սօլօ, Արձի, Ժիւրի 3-ական, յոթօրօ՝ 1. 30, Խաչազող 4, Կոյիւն 1, Արձի 2. 50, Բեօսա 2, Որսորդ 2, Գուրգէն 3, Կաշի 7, Ժաղիկ 1. 40, Խորթն 2. 30, X. 0. 50: Գումար 74 ուրբի:

«Շիրակ» խմբի միջոցով N° 174—101 ուրբի:
N° 175—Օնէս, Համաս, Ծ...ն, Բախաւ, Արտուր, Արմալի, X. մէկ-մէկ-ական ուրբի, Օնէս. Մօղիս 2, Լիբա, Նկար, N° N° 50-ական կօպէլ: Գումար 10 n. 50 կօպէլ:

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՆ՝

Ա. Յով. 5 Քրանք, Ն. Միսաս 5. 15, Փարհատ 7. 50, ՍՈՒ-ԼԻՆԱՅԻՑ 35, Պ. Խօ. 5, ՓԱՐԻՉԻՑ՝ Մ. Մ. 45, Մ. Գ. 20, Ն. Մ. 9, Ջատ. 10, Կատողած 5, Ա. Խօ. 5, Աղրունի 2, Գոյում 1, Յիսուս 1, Վահան 2, Զ. Եղայայր 4, Տ. Պ. 2, Ոմս 1, Արթաղի 1, Խաչազիւղ 2, Օսաննէսից 10, Միւնիսի հայ ուսանողներից 110: Գումար 287 Քրանք 65 սանթիմ:

ՊՐԱՅԼԱՅԻՑ (Ռուսմանիս) «Առիւծ» խմբից՝ Գօստ 6 Քրանք, Ջալատ 4, Ջաւէն 4, Հրհատ 4, Սիսակ 5, Գաղրիկ 4, Սուրէն 10, Ասոմ 3, Ատէ 10, Խաքս 5: Գումար 55 Քրանք. (այս զումարից 2 Քր. ծախս է արւած խմբի պէտքերի համար):

ՆԱԿԱՅԱՆԳՍՏԻ ԿԵՂՐ. Կօմիտէն՝

ԳԱՊԱՎԱՅՐԻ Գետեզը գիւղից Ս. Գաւաթեան 6 ուրբի, Բաբէն Սիւնի 5, Տիրան եւ Արամ 5, Մ. Ս. Չուրքիսն 5, Ա. Չուրքեան 1: Գումար 22 ուրբի:

Լ. Պ. ԿԵՂՐ. Կօմիտէն՝

Ննթակայէն՝ եր կանխավար 3900 դահեկան:

ՎՐԵՍԻ ԿԵՂՐ. Կօմիտէն՝

Հանգանակութիւն Հ. Յ. Գաշնակցութեան Տասնամեակի առթիւ ՍՊԱՀԱՆ Յ.-ի միջոցով—Փէրով 3 թուման, Բուրդ 2, Լ. Մ. 1, X. 2, Իէլքով 1. 5, Հայ 3, Չա. Լ 1, Աէր 2, Կեցցեն 2, Փիւրաթամ 1. 5, Աւլան 2, Աղմախլումայ 2, Գազիկ, Ջոզան, Ոմս, Հուր, Քահայ, Միւրն մէկ-մէկական, ՌԱՇՏԻՑ մի վիճակախաղից 25: Գումար 64 թուման:

ՀԱՄԱՆՂՈՒՈՒՑ՝ Վրէժ 30 ուրբի, Պօղոս 5, Միւրայ 5, Էանց, Բաթը, Գրեգորեան, Ե. ք Ս., Տ. Վարդուհի 3-ական, Մ. Մ. 5, Արագ 1, Մամառ, Ջարգար, Յարութիւն, Տապար, Եղիշ 2-ական: Գումար 71 ուրբի:

ՄԱՐԶԱՐԻՑ՝ Պետրոս 100 դան, Սունէցի 50, Ղարստաղի, Յովհաննէսեանց, Ոմս, Գողթնցի, Մազիկարի, Արագ, Հայ, Ոմս, Թառղան 20-ական, Գաւիթ ք. 25, Գօրոն 20, Պարսիկ ոմս 60, Միւնեաց 30: Գումար 465 դան:

ԲԱԿԱՆԵԱՆ ԿԵՂՐ. Կօմիտէն՝

Փիւլիպէ.—Տ. Ս. Բ. 10 Լէվ, «Շարք» կանանց խմբ. 108. 60, Վրէժ՝ խմբ. (յունիւ. փետր. մարտ) 61, «Պուկարացի Պետո» խմբ. 44, «Արեւելեան» խմբ. 10. 50, «Հնթում-Գազիկ» խմբ. 32, «Պարմասն» խմբ. 55. 50, Պ ու ը կ ա զ ի Մամաժիւղէն 200, Միւլիստը 218. 50, Գ ա ը ա ը ու Ն ա ը ի «Պետո» խմբ. 80, Սերոբ-Աղբիւր՝ խմբ. 47, Գ ա յ ա ժ ը ը ի «Ամսուրաց» խ. 58. 50, Ռ ու Ն թ ու ը ի ննթակախմբի 150, Վ ի լ ի ը ի Գ ը ո լ զ ի աղգայիներէ 15, Վ ա ո ն ա յ ի Պահպանողականէն 1901-ին 100, Ս ու լ ի ն ա յ ի ննթակախմբի 361. 50 ոսկի Քր.: Գումար 1190. 50 Լէվ եւ 361. 50 ոսկի Քրանք:

Խմբագրութեան գիւմէլ հետեւեալ հասցէով՝

Rédaction du «Droschak», Genève (Suisse)